1895 ԱՊՐԻԼԻ 21 (3 Մայիսի) ՈՒՐԲԱԹ

Ե. 44—ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 44

ԱՐԶԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՐԴԶԱԳԱՆՔ (Avant-Garde) Revue de la Revolution de la Mechitaristes

„ԱՐԶԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ
Օտարաքաղաքացիք պէտք է գիմեն՝ Тифлисъ, Редакція "Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔԱՅԱՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Ուրբաթ, ապրիլի 21-ին, կներկայացուի առաջին անգամ
„ԱՄՈՒՍԻՆՆԵՐ“
Կամ. 5 գործողութեամբ, հեղինակութիւն Գաբրիէլ Սունդուկեանցի, թարգմանութիւն հայերէնից։
Մասնակցողներ՝ օր. օր. և տիկ. տիկ. Ժուրավլեովա, Մարտինովա, Լօգինա, Ստրօգանովա, Բաուէր, Իվանովսկայա. պ. պ. Փօրկատ, Ստեպանով, Կրասով, Պետրոսեան, Կոլօբով, Դմիտրիեվ և այլք։
Երեկոյեան 6½ ժամից թատրոնական այգումն կընուագէ վինուրական երաժշտական խումբը զեկավարութեամբ Ի. Լոյկոյի։
Սկիզբը երեկոյեան 8 ժամին։
Բեժիսեօր՝ Լ. Կ. Լուդվիգով։
Անտրպրենեօր՝ Վ. Լ. Փօրկատի։
1—1

ԼՕՅՍ ՏԵՍԱՆ
ԵՐԿԱԲԱԶԱՓ ՀԱՏՈՒԱԾՔ
ԱՂԼԻՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆԻ ԱՀԽՈՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՔ
XIX-ՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ
(ՄԱՍՆ Գ. 1831-1842 Թ.)
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ III՝ ԿԱՐԵՑԻՈՅ
և
ՊՕԼՕՓԷՆԻԷ
ԳԻՆՆ Է 2 Ռ., ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ 2 Ռ. 50 Կ.
Առաջին և երկրորդ հատորները միասին 4 ռ., ճանապարհածախսով 5 ռ.
(10—9)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական խնդիր՝
Մեծ Բրիտանիայի ազդարարումը։
Քննիչ Կոմմիսիա։
Միստր Գ. Յակոբեանի յիշատակագիրը։
Անգլօ-Հայկական ընկերութեան ժողոված գումարների հաշիւը։
Մի գրքոյկ հայկական խնդրի վերաբերեալ։
Ռուսաստանը և Անգլիան հայկական խնդրում։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — «Այտնեան արուեստագիտական հիմնարկութիւն»։ Լօնդոնի Ալպեան կլիւբի հրատարակութիւնը։ Արհեստաւորաց դպրոցների նոր ծրագիրը։ Կարս-Թիֆլիզեան երկաթուղու օժանդակիչ գծեր։ Երեանի քաղաքապետի հրաժարուիլը իր պաշտօնից։ Թիֆլ. քաղաքապետի ընտրութեան հարցը։ Փորձնական ազարակներ բամբակի մշակութեան համար։ Նամակ Պետերբուրգից։ Նամակ Աբաշեթայից։ Բազուից։ Դաշնակահար Ն. Լիստովնիչու նուագահանդէսը։ «Ամուսինների» ներկայացումն ռուսերէն լեզուով։ Պետերբուրգում մըզկիթ մահմեդականների համար։ Թիֆլիզի քաղաքային թատրոն։ Կոյրերի խնամատարութեան հոգաբարձութեան Կոկ. բաժնի հաշիւը։
ՏԱՃԿՍ-ՀԱՅԱՍՏԱՆ. — Նամակ Ղարաքիլիսայից։ Լուրեր։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Ջասմնցոց կեանքը և բարքն ու վարքը։ Նամակ խմբագրութեան։ Ժողովրդական երգեր։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿՍՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

Ըէյտերի գործակալութեան ապր. 19-ի հեռագիրը Կ. Պօլսից, որ կարդում ենք «The Daily News»-ում, հաղորդում է, թէ Բրիտանիայի դեսպան սեօր Փիլիպ Կերրին ապրարարութիւն արաւ Բ. Դրան, յանդիման կացուցանելով այն հանգամանքը, որ գաւառների թիւրք պաշտօնատարները շարունակում են ճնշել ու հալածել հայերին։ Նորին վսեմութիւնը մատնացոյց եղաւ այն վտանգի վրայ, որ կարող է ծագել այդ ընթացքից, և շեշտեց, թէ յօդուտ նոյն իսկ Օսմանեան պետութեան պէտք է լիովին վերջ տալ դրան։ Բ. Դուռը խոստացաւ Բրիտանական դեսպանին՝ անմիջապէս հրահանգներ առաքել այդ իմաստով բոլոր նահանգապետներին։

ՔՆՆԻՉ ԿՕՄՄԻՍԻԱ

Նոյն զրծակալութիւնը հեռագրում է, թէ Քննիչ Կոմմիսիան նարբես հարց ու փորձ է արել բազմաթիւ հայ վկաներ, որոնցից ոմանք վկայել են, թէ իրաք բազմաթիւ հայեր կոտորուելուց յետոյ խառն ի խուռն ձգուել են մի ահագին փոսի մէջ, որ կանխաւ փորուած է եղել նոանց դիերն ընդունելու համար։ Հայերի ցուցմունքը սակայն մի քանի բաներում իրար հակասող էր, և որովհետև թիւրքերը շարունակում են բացարձակ ուրանալ որ և է կոտորած,—Կոմմիսիային դժուար կը լինի մի դրական եզրակացութեան հասնել այս խնդրի նկատմամբ։ Բայց և այնպէս հայերը յուսով են, թէ երբ որ Կոմմիսիայի անդամներն անձամբ գնան Սասունի գիւղերը, որ տակաւին չեն գնացել վատ եղանակի պատճառով, անպատճառ կը գտնեն կոտորածի հետքեր և մանաւանդ այն փոսը, որի մէջ թաղուած են եղել զոհերը։ Սակայն որքան էլ ստոյգ կամ անստոյգ լինի այդ բոլորը, շահակից մեծ պետութեանց ներկայացուցիչները համոզուած են, որ անպայման հարկաւոր է ռէֆորմներ մտցնել Հայաստանում, և իրենց անելիքը պիտի հիմնեն ոչ այնքան քննութեան այս կամ այն արդիւնքի վրայ, ինչքան որ այն հանգամանքի վրայ, որ թիւրքական նահանգների վարչութիւնը Փոքր-Ասիայում ընդհանրապէս անբաւական է և վատթար, և որ այդ վիճակի շարունակութիւնը մի մշտական վտանգ կըսպառնայ Օսմանեան պետութեան։

ՄԻՍՏՐ Գ. ՅԱԿՈԲԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԸ

Միստր Գ. Յակոբեանը դարձեալ մի յիշատակագիր ներկայացրեց Լորդ Գիմբերլէյին Լօնդոնի հայոց կողմից, որի մէջ նա ցոյց է տալիս Հայաստանի տնտեսութեան համեմատական թուերը և ապացուցանում, թէ ինչպէս՝ այս վերջին տարիների ընթացքում թիւրք կառավարութիւնը ձգտել է բնաջինջ անել հայերին և մի և նոյն ժամանակ թիւրքերով ու քիւրդերով լցնել հայաբնակ նահանգները։ Միստր Յակոբեանը խնդրում է գործ դնել այնպիսի միջոցներ, որոնք օրէնք, կարգ - կանոն, արդարութիւն մտցնեն այդ երկրում Եւրոպայի հովանաւորութեան ներքոյ։ Նա ուղարկում է լորդ Գիմբերլէյին և՝ բազմաթիւ պաշտօնական դոկումէնտների պատճէններ ի հաստատութիւն իւր յառաջ բերած փաստերի և աւարտում յոյս յայտնելով, թէ Վեհափառ Թագաւոր կառավարութիւնը և միւս դաշնադիր պետութիւնները զանց չեն անիլ կատարել իրենց պարտքը հայ ազգի վերաբերմամբ՝ դրա ներկայ տագնապալից րոպէին։

«Նոր. Վրէմ.» հեռագրում են Լօնդոնից.—«Daily News» և «Daily Telegraph» թերթերը տպագրել են առաջին հաշիւը՝ այն գումարների մասին, որ Անգլօ - հայկական ընկերութիւնը ժողովել է անգլիացիներից։ Քաղաքական շրջաններում ենթադրում են որ յօդուտ հայերի եղած ագիտացիան սուր կերպարանք կըստանայ և կաբինէտը դրանից օգուտ կըքաշի։ Թուրքերը և թրքամոլները սարսափի մէջ են, զգալով որ կարող է մի անսպասելի բան պատահել։ Լուրեր են պտտում որ Անգլիան ուզում է Միացեալ-Նահանգների համաձայնութիւնը ձեռք բերել յօդուտ Ճափոնիայի»։

Անգլիական թերթերը հաղորդում են որ այս օրերս լոյս է տեսել Ֆր. Գրբրինի (Fr. Greene) մի գրքոյկ հայկական խնդրի վերաբերեալ «The Armenia Crisis in Turkey» վերնագրով։ Հեղինակն ինքը ապրել է Հայաստանում և կատարեալ հնարաւորութիւն է ունեցել ամենաճիշդ տեղեկութիւններ ստանալու տաճկ. Հայաստանում տեղի ունեցած վերջին տրագիկական անցքերի մասին։ Գրինի գրուածքի գլխաւոր մասը կազմում են Հայաստանում ապրող անձանց հաղորդած փաստային տեղեկութիւնները,—տեղեկութիւններ, որոնք, հեղինակի ասելով, ամենաակներև կերպիւ հաստատում են, որ 1894 թուի օգոստոսի վերջերում Սասնոյ և շրջակայ գաւառների մէջ տեղի է ունեցել հայերի կոտորած և յատկապէս քիւրդ զօրքերի մասնակցութեամբ, թելադրութեամբ տաճկաց սուլթանի, այլ և մասնակցութեամբ տաճիկ կանոնաւոր զօրքերի։» Գ. Գրինի աշխատութիւնն արժէ 1 շիլինգ 6 պենս (60 կոպ.) և լոյս է տեսել հրատարակութեամբ Putnam գրավաճառի։

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄ

(Նոր. Վրէմիա № 6868, թղթակց. Լօնդոնից)։

«Քաղաքական անցքերին հետևողները շատ լաւ գիտեն, թէ ինչպէս յաճախ հասարակական կարծիքի վրայ սիրապատում են սուտ, կեղծուպատիր երեւոյթները, որոնք բոլորովին հակառակ գաղափար են տալիս այն բոլորին, ինչ որ պատահում է։ Հիշեցէք թէ եղել է արդեօք մի ժամանակ, երբ խօսքի և գործի մէջ այնքան հակասութիւն լինէր, որքան կայ այժմ հայկական խնդրում։ Առաջին նայուածքից անգլիացիք երևում են՝ հայերի վեհանձն, ոգևորուող և անձնազոհ բարեկամները։ Քարոզներ, յօդուածներ, միտինգներ, ցոյցեր, այդ բոլորը կատարվում է այնպէս բարձրատիպարներ են և կ'արտաքսեն այն գիւղացուն, որ կը մեղանչէ դրա դէմ։ Տալուորիկի բնակիչները, երաւ է՝ գինի պատրաստում են, բայց աւելի շուտով թոյն կ'ընդունեն, քան թէ գինի։ Իրենց պատրաստած գինու մինչև վերջին կաթիլը նրանք վաճառում են մշեցոց, որոնք հաւատարիմ են թէ գինուն և թէ կրօնին։ Սասունցոց հասարակ կարմրագոյն քարէ շինուած եկեղեցիները զուրկ են զանգակատնից, ուստի և չեն լսում բանաստեղծի յիշած «զանգակների քաղցրահնչիւն մեղեդին». դրանց փոխարէն նրանք ունին իւրաքանչիւր եկեղեցու դռան վրայ մի մետաղեայ տախտակ—կ ո ղ ն ա կ, որին խփում են երկաթէ գաւազանով, և շատ տխրական ձայն հնչեցնում։ Սասունն ունի իւր առանձին պաշտպան սուրբը, մի շատ առանձի և զօրեղ սուրբ. դա է Սուրբ Մարօպէն։ Պարզամիտ գիւղացիք անպայման հաւատ են ընծայում նրա հրաշագործ զօրութեան։ Այս էր պատճառը, որ վերջին կոտրածի ահեղ ժամին երեք հարիւր կանայք և աղջկունք Տալուորիկի Ս. Մարօպի եկեղեցուն ապաւինուեցան, լիովին համոզուած լինելով, թէ անվընաս դուրս կը գան։ «Եւ ուր է նրա զօրութիւնը, եթէ չպաշտպանեց այն խեղճերին», հարցրեց ինձ մի վկայ մի քանի ամիս անցնելուց յետոյ։ Ծննդեան և Զատկի տօներից զատ՝ տարուայ ամենամեծ տօնը Ս. Սարգսի տօնն է։ Այդ սուրբն այն աստիճան պաշտելի է հայոց համար, որ մահմեդականները հայ մարդուն քրիստոնեայ անուանելու աեղ՝ ստէպ անուանում են նրան Սարգսի որդի։ Նրա տօնը շարժական է, բայց միշտ լինում է շաբաթ օր (յունվարի վերջն և կամ փետրվարի սկզբին). տօնից առաջ շատ խիստ պահք է պահվում։ Ուրբաթ երեկոյեան նորատիպարները և կ'արտաքսեն այն գիւղացուն, որ կը մեղանչէ դրա դէմ։ Տալուորիկի բնակիչները, երաւ է՝ գինի պատրաստում են, բայց աւելի շուտով թոյն կ'ընդունեն, քան թէ գինի։ Իրենց պատրաստած գինու մինչև վերջին կաթիլը նրանք վաճառում են մշեցոց, որոնք հաւատարիմ են թէ գինուն և թէ կրօնին։ Սասունցոց հասարակ կարմրագոյն քարէ շինուած եկեղեցիները զուրկ են զանգակատնից, ուստի և չեն լսում բանաստեղծի յիշած «զանգակների քաղցրահնչիւն մեղեդին». դրանց փոխարէն նրանք ունին իւրաքանչիւր եկեղեցու դռան վրայ մի մետաղեայ տախտակ—կ ո ղ ն ա կ, որին խփում են երկաթէ գաւազանով, և շատ տխրական ձայն հնչեցնում։ Սասունն ունի իւր առանձին պաշտպան սուրբը, մի շատ առանձի և զօրեղ սուրբ. դա է Սուրբ Մարօպէն։ Պարզամիտ գիւղացիք անպայման հաւատ են ընծայում նրա հրաշագործ զօրութեան։ Այս էր պատճառը, որ վերջին կոտրածի ահեղ ժամին երեք հարիւր կանայք և աղջկունք Տալուորիկի Ս. Մարօպի եկեղեցուն ապաւինուեցան, լիովին համոզուած լինելով, թէ անվընաս դուրս կը գան։ «Եւ ուր է նրա զօրութիւնը, եթէ չպաշտպանեց այն խեղճերին», հարցրեց ինձ մի վկայ մի քանի ամիս անցնելուց յետոյ։ Ծննդեան և Զատկի տօներից զատ՝ տարուայ ամենամեծ տօնը Ս. Սարգսի տօնն է։ Այդ սուրբն այն աստիճան պաշտելի է հայոց համար, որ մահմեդականները հայ մարդուն քրիստոնեայ անուանելու աեղ՝ ստէպ անուանում են նրան Սարգսի որդի։ Նրա տօնը շարժական է, բայց միշտ լինում է շաբաթ օր (յունվարի վերջն և կամ փետրվարի սկզբին). տօնից առաջ շատ խիստ պահք է պահվում։ Ուրբաթ երեկոյեան նորատիպ

խարի կամ կովի կաթ, որ մի թթու և սխորժելի համ ունի. քամած և տրեի տակ չորացրած մածուն, որի կլորակները կոչվում են չ ո ր թ ա ն. թ ե լ պ ա ն ի ր անունով մի տարօրինակ պանրի տեսակ, որի կաժը կամ կծիկը դրվում է սեղանի վրայ. մածնից և չորթանից պատրաստուող մի սուպ, որ կոչվում է ա պ ո ւ ր կամ ս պ ա ս. վերջապէս կարագ և առատ մեղր,—այս է սասունցոց առօրեայ պարզ և առողջ կերակուրը, որի վրայ հանդիսաւոր օրերին աւելանում են ոչխարի կամ գառան միս։

Բժիշկներ, եւրոպական առումով, բոլորովին անյայտ են սասունցոց, և նրանք բաւականին լաւ են եօլայ գնում նախնական միջոցներով. սակայն անդօր են երկու չար հիւանդութեանց դէմ, յատկապէս ժանտատենդի (typhus, վարցաւ) և ծաղկի, որոնց զոհ են գնում գրեթէ 60-ից մինչ 70 տոկոս երեխայք։ Նրանք շատ ինքնուրոյն կերպով են վարվում այդ վերջին հիւանդութեան հետ։ Ես ստէպ ստէպ ճաշել եմ մի և նոյն սեղանից շարաչար ծաղկով հիւանդ մանուկների հետ, ստէպ քնել եմ նրանց քնած սենեակում և շատ անգամ սեղմել նրանց թաթիկը։ Պիտի ասեմ, որ սիրելի չէր ինձ այդ բանը, բայց ի՞նչ արած։ Անախորժ պայմաններին յարմարուիլը մի պարտք է լրագրողի համար, որ կամենում է ուսումնասիրել իրեն անծանօթ մի աշխարհ։ Ցան հասկաւոր մարդիկը չէին էլ մտածում, թէ գուցէ վտանգաւոր է փայփայել և գգուել վարակուած երեխաներին։ «Ի՞նչ կայ որ,—գատարկ բան է», ասում էին նրանք։ Այդ հերոսական հայեացքը բանի վրայ բացատրվում է, եթէ ոչ արդարացվում, այն հանգամանքով, որ հայերը սովոր են պատուաստել բոլոր երեխաներին՝ հենց որ իրենց տանը և կամ հարևանների մօտ մի ուրիշ տղայ վարակուի։ Նրանք խորշում են կովի թարախ պատուաստուելուց և շատ են սիրում հիւանդ մարդու ժանգով պատուաստ անել (vaccination they despice, inoculation they hyghly approve of)։ Եւ այդ է պատճառը, որ հայ երեխաներն առանց բացառութեան վարակվում են ծաղկով, և եթէ սովորաբար հարիւրից 20 կամ 30 տոկոս առողջանայ, այլևս չեն վախենում այն պատից։ Ծաղկի և ժանտատենդի պատճառած մահերն արդարև սոսկալի են։

Ամեն սկզբնական ազգերի նման՝ սասունցիք շատ են յարգում վիրաբուժութիւնը, մինչդեռ բժշկական արուեստի միւս ճիւղերը մեծ արժէք չունին նրանց աչքում։ Եւ ես կարող եմ հաւատել, որ հայ վիրաբոյժն աւելի ճարտար է և օգտակար հիւանդների համար, քան թէ իւր եւրոպացի ընկերներից շատերը։ Սակայն ինչքան որ սասունցիք անտարբեր են դէպի Դալէնի (131—200 թ. Քրիստոսի) աշակերտները, այնքան էլ մեծարում են հոգևոր բժիշկներին, որոնք կոչուած են հոգին փրկել։ Շատ անգամ մեղադրել են նրանց, ասելով թէ նրանք մ ի ա բ ն ա կ ո ւ թ ե ա ն (monophysisme) հետևողներ են *)։ Բոլորովին անհիմն մեղադրանք։ Միենոյնը կը լինէր, եթէ ասէինք, յանդիմանելու մտքով, թէ մեր Նօրթումբերլանդցի հովիւները Հեգէլի փիլիսոփայութեան արբանեակներ են։ Ամբողջ Սասունում չէք գտնիլ հարկաւ մի քահանայ և նոյն իսկ ամբողջ Փոքր-Ասիայում հինգ քահանայ, որոնցից մի քանիսը գրաւոր կերպով բացատրել, թէ ինչ է իսկապէս միաբնակների վարդապետութիւնը և կամ թէ ինչ Ֆրանցի, Օգիւստ Կոնտի (1798—1857) և գերմանացի Հօպէնհաուէրի (1788—1860). ուսմունքը նրանցից շատերը մինչև անգամ կը դժուարանան ուղիղ գրել և կարդալ։ բայց և այնպէս ընդհանուր առմամբ, հայ հոգևորականները բարեմիտ, բազմաշխատ, ազնիւ մարդիկ են—գիւղացիք են և գիւղացոց պէս։ Իմ ճանաչածներից շատերը հիանալի հովիւներ են, ինչպէս որ է, օրինակի համար, Տէր-Մելիքսեդէկեան աւագ քահանան, որ որ եկեղեցուն էլ ասես զարդ կը լինէր։ Միւս կողմից հայոց ազգը, երբոր Աստուծով այս օրուայ ադէտներից ազատուի, դառնութեամբ կը յիշէ պատմական Ս. Կարապետ վանքի միաբանների ոմանց դաւանանութիւնը, որ ի դերև հանուեցաւ միայն ճշմարտասէր օտարների վեհանձն միջամտութեամբ։ Մի քանի տեղական քահանաներ և վարդապետներ պատուական կրթութիւն ունին և ըստ կարելոյն ջանադիր են դաստիարակել ժողովրդի մանուկներին։ Բայց որովհետև տեղեր կան, ուր երկու օրուայ շրջակայքում, թուղթ, գրիչ և թանաք չէք գտնիլ, ուստի աշակերտները հարկադրուած են գրել սև քարի վրայ, որ բերվում է Բաթմանի ձորից։

Չնայելով սակայն իւր ազիտութեան՝ ժողովուրդը պարզ, ջերմեռանդ քրիստոնեայ է, նմանքան հաստատ իւր հաւատին և կամ մոլորուող, որքան և իւր արևմտեան եղբայրները։ Այդ ժողովուրդը համոզմունքի քաջութիւն ունի։ Սասունցիք երբէք ուտիս չեն ուտիլ պաս օրին և սաստիկ կ'ատեն այդպէս անողին, թէև պահոց օրերն անթիւ են։ Երբէք էլ նրանք գինի, օղի կամ գարեջուր չեն խմիլ։ Նրանք ժուժկալութեան լիակատար

---

*) Այդ վարդապետութիւնը, որի քարոզողն Բիւզանդացի Եւտիքէս վանահայրն էր (448 թ. Ք.), մերժում էր Քրիստոսի բնութեան երկուութիւնը, ասելով թէ նա մարմնաւորութիւնից առաջ կատարեալ Աստուած էր, իսկ մարմնաւորութիւնից յետոյ՝ կատարեալ մարդ։

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍԱՍՈՒՆՑՈՑ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԲԱՐՔՆ ՈՒ ՎԱՐՔԸ

Հետեւեալ յօդուածը, որը քաղում ենք «The Daily Telegraph»-ի մարտի 28-ի համարից, այդ թերթի պատուական թղթակցի վեցերորդ (փոստային) նամակն է։

«Կարող ես ասել ինձ, էիդօ, թէ ինչ հարստութիւն ունէր ձեր ընտանիքը կոստորածից առաջ», հարցրի ես ըստանուած չէնիկցի գիւղապետ Գրիգորի եղբօրը։

«Ինչու՞ չէ, էֆէնդի։ Մենք ունէինք մի քարաչէն տուն, ինչպէս և մեր հարևանները. միայն թէ մերը փոքր ինչ մեծ էր, թէև մեր ընտանիքը շատ բազմամարդ չէր—ընդամենը յիսուն հոգի։ Բայց Աստուած ամեն բան տուել էր մեզ, գանձատուելու տեղիք չունէինք։ Մեր տանը հինգ սենեակ կայ—միայն մարդկանց համար։ Դոմերը, ախոռները, փարախները չեմ հաշվում։ Դրանց թիւը տասնուչորս էր»։

«Տասնուչորս», գոչեցի ես։ «Ուրեմն քանի՞ հատ ոչխար կ'ունենայիք»։

«Մենք ունէինք, էֆէնդի, վեց հարիւր գլուխ ոչխար ու այծ, որ պահում էինք մեր տան պէտքերի համար, և մի հազար հատ՝ Ջէյէկին վաճառելու համար *), երբ որ նա գալիս էր գարնան հարաւից։ Ցետոյ ունէինք քառասուն կով, յիսուն գլուխ լծկան եզ, տասնուհինգ երինջ, տասն զուարակ, երեսունհինգ հորթ և հինգ ձի։ Բայց այդ բոլորը քամին տարաւ, ինչպէս որ տասնում է լեռների առաւօտեան մշուշը»։

Այդ խօսքերը հնչում էին, իբրև մի ինքնուրոյն և նահապետական բան, որ մի ազգ ու հեռաւոր պատկեր է յիշեցնում մեզ, այն է՝ Յովբին,—«և էին խաշինք նորա՝ եօթն հազար ոչխար, ուղտք երեք հազարք, լուծք եզանց հինգ հարիւր»,—և առիթ տալիս լաւ կարծիք ունենալու տաճկական վարչութեան մասին, որի տակ կարող էր մի այդպիսի բարգաւառութիւն յառաջ գալ։ «Էլ ինչ կարիք ունէին այդ անզգամները։ Մենք նրանք մեր վարչութեան տակ հաղարապահ երջանիկ չէին, քան թէ ուրիշ տեղացի հայք», ասաց ինձ մի թիւրք սպայապետ, որի հետ խօսակցել էի մի քանի օր առաջ։ Սակայն դա մի սխալ դատողութիւն է։ Պէտք չէ մոռանալ այն շատ էական հանգամանքը, որ ստացուածքը պատկանում էր առ նուազն յիսուն միացած անհատների, որոնց միջև եթէ հաւասար բաժանուէր, իւրաքանչիւրը կունենար միայն երեսուն և երկու ոչխար, իսկ ոմանք և ոչ մի կով, ոչ էլ եզը կամ թէ ձի, և որ այդ ոչխարները չէին կազմում մի պահեստի դրամագլուխ, որին ձեռ տալ չէ կարելի, այլ երկարամեայ ծանր աշխատութեան արդար վարձք։ Որովհետև սասունցիք բոլորն էլ բանում են իրենց ապրուստի համար, ինքեան են իրենց կտուը գործում, բուրդը մանում, կարպետները հիւսում և մի ինքնարաւ քաղաքի պէս ամեն պէտքերը հայթհայթում։ Այս պատճառով նրանք վանող չեն, շատ ջանասէր են ու տնարար, և իրենց աշխատութեան բոլոր արդիւնքը գետեղում են հասարակաց գոյքի մէջ։

Նրանց մնունդն էլ փարթամ չէ բընում։ Թղթաձև, փափուկ և թեթև համեղ հաց, որ կոչվում է լ ա ւ ա շ. մածուն կոչուող եփած և մակարդած ոչխարի կամ կովի կաթ, որ մի թթու և սխորժելի համ ունի. քամած և տրեի տակ չորացրած մածուն, որի կլորակները կոչվում են չ ո ր թ ա ն. թ ե լ պ ա ն ի ր անունով մի տարօրինակ պանրի տեսակ, որի կաժը կամ կծիկը դրվում է սեղանի վրայ. մածնից և չորթանից պատրաստուող մի սուպ, որ կոչվում է ա պ ո ւ ր կամ ս պ ա ս. վերջապէս կարագ և առատ մեղր,—այս է սասունցոց առօրեայ պարզ և առողջ կերակուրը, որի վրայ հանդիսաւոր օրերին աւելանում են ոչխարի կամ գառան միս։

Բժիշկներ, եւրոպական առումով, բոլորովին անյայտ են սասունցոց, և նրանք բաւականին լաւ են եօլայ գնում նախնական միջոցներով. սակայն անդօր են երկու չար հիւանդութեանց դէմ, յատկապէս ժանտատենդի (typhus, վարցաւ) և ծաղկի, որոնց զոհ են գնում գրեթէ 60-ից մինչ 70 տոկոս երեխայք։ Նրանք շատ ինքնուրոյն կերպով են վարվում այդ վերջին հիւանդութեան հետ։ Ես ստէպ ստէպ ճաշել եմ մի և նոյն սեղանից շարաչար ծաղկով հիւանդ մանուկների հետ, ստէպ քնել եմ նրանց քնած սենեակում և շատ անգամ սեղմել նրանց թաթիկը։ Պիտի ասեմ, որ սիրելի չէր ինձ այդ բանը, բայց ի՞նչ արած։ Անախորժ պայմաններին յարմարուիլը մի պարտք է լրագրողի համար, որ կամենում է ուսումնասիրել իրեն անծանօթ մի աշխարհ։ Ցան հասկաւոր մարդիկը չէին էլ մտածում, թէ գուցէ վտանգաւոր է փայփայել և գգուել վարակուած երեխաներին։ «Ի՞նչ կայ որ,—գատարկ բան է», ասում էին նրանք։ Այդ հերոսական հայեացքը բանի վրայ բացատրվում է, եթէ ոչ արդարացվում, այն հանգամանքով, որ հայերը սովոր են պատուաստել բոլոր երեխաներին՝ հենց որ իրենց տանը և կամ հարևանների մօտ մի ուրիշ տղայ վարակուի։ Նրանք խորշում են կովի թարախ պատուաստուելուց և շատ են սիրում հիւանդ մարդու ժանգով պատուաստ անել (vaccination they despice, inoculation they hyghly approve of)։ Եւ այդ է պատճառը, որ հայ երեխաներն առանց բացառութեան վարակվում են ծաղկով, և եթէ սովորաբար հարիւրից 20 կամ 30 տոկոս առողջանայ, այլևս չեն վախենում այն պատից։ Ծաղկի և ժանտատենդի պատճառած մահերն արդարև սոսկալի են։

Ամեն սկզբնական ազգերի նման՝ սասունցիք շատ են յարգում վիրաբուժութիւնը, մինչդեռ բժշկական արուեստի միւս ճիւղերը մեծ արժէք չունին նրանց աչքում։ Եւ ես կարող եմ հաւատել, որ հայ վիրաբոյժն աւելի ճարտար է և օգտակար հիւանդների համար, քան թէ իւր եւրոպացի ընկերներից շատերը։ Սակայն ինչքան որ սասունցիք անտարբեր են դէպի Դալէնի (131—200 թ. Քրիստոսի) աշակերտները, այնքան էլ մեծարում են հոգևոր բժիշկներին, որոնք կոչուած են հոգին փրկել։ Շատ անգամ մեղադրել են նրանց, ասելով թէ նրանք մ ի ա բ ն ա կ ո ւ թ ե ա ն (monophysisme) հետևողներ են *)։ Բոլորովին անհիմն մեղադրանք։ Միենոյնը կը լինէր, եթէ ասէինք, յանդիմանելու մտքով, թէ մեր Նօրթումբերլանդցի հովիւները Հեգէլի փիլիսոփայութեան արբանեակներ են։ Ամբողջ Սասունում չէք գտնիլ հարկաւ մի քահանայ և նոյն իսկ ամբողջ Փոքր-Ասիայում հինգ քահանայ,

---

*) Ջէյէկը տաւար գնողն է, սովորաբար մի հալէպցի արար, որ գալիս է գարնան և աշնան վերադառնում։

ձայն, այնպիսի ազմուկով, որ թվում է թէ կասկածելն անտեղի է։ Իսկ ընդհակառակն Ռուսաստանը, ըստ երևոյթին, ձեռները ծալած կանգնած միայն նայում է Հայաստանում տեղի ունեցած սարսափներին։ Գոնէ ոչ վրդովմունքի, ոչ սպառնալիքների և ոչ որևէ ձեռնարկութեան նշաններ կան։

Բայց իսկապէս ի՞նչ է դուրս գալիս գործից։ Ռուսաց սահմաններում այժմ գտնվում են 15,000-ից աւելի փախըստականներ տաճկական Հայաստանից և նրանք ամենքը պահպանվում են Ռուսաստանի հաշուով։

Նորերս Կովկասից Լոնդոն եկող հայերը ինձ պատմեցին, որ նրանց ազգակիցները, որոնք փախչում են սարսափներից, սահմանն անցնելուս պատահում են կոզակներին և սկզբում վախենում են նրանց ահարկու տեսքից և նրանց խիստ դէմքերից, երբ նրանք անցագիր են պահանջում և հարցնում են փախըստեան պատճառները. բայց յետոյ փախըստականները մնում են հիացած այն բարեսրտութիւնից և սրտագին ցաւակցութիւնից, որով նրանց համար ընակարան են պատրաստում և ապահովում նրանց սնունդը։ Ճանապարհորդները պատմում են, թէ Կարսի նահանգում հասարակական աշխատանքներ են ստեղծում յատկապէս այդ փախստականների համար (!), որոնք արդէն իրենց բոլորովին ազատ են զգում՝ թէ սարսափից և թէ կարօտութիւնից, նրանց մասին հոգացող իշխանութեան պաշտպանութեան և խնամակալութեան տակ, շրջապատուած ջերմ թէև ոչ ազմկալից գուրգուրանքով։ Ի հարկէ նրանք յետ գնալու մասին բոլորովին չեն էլ մտածում, իսկ նրանց բարեկեցութեան լուրը գրաւում է դէպի Ռուսաստան ամենքին, որոնք կարողանում են փախչել սահմանակից հողերից։

Հայ փախստականները երևացել են նաև Արևմտեան Եւրոպայում։ Նրանց գրաւել է մանաւանդ այն համբաւը, թէ նրանց համակրութիւն են ցոյց տալիս ամենահարուստ երկրում, ուր արդէն մի հզօր հիմնարկութիւն է կազմուել, որ մրցում է ի պաշտպանութիւն հայերի իրաւանց։ Եւ ահա Աթէնք, Հռոմ, Փարիզ և Լոնդոն եկող հայերը գրում են և դիմում Անգլօ-հայկական ընկերութեան, հաստատած լինելով, որ նրանց առատօրէն կ'օգնէ։ Բայց նրանք կատարելապէս հիասթափվում են։ Ընկերութիւնը պատասխանում է, թէ ինքը նպաստներ բաժանելու համար գումարներ չունի և առ հասարակ չէ կարող փախստականների վիճակը հոգալ։

Այս երևոյթն ուշադրութեան արժանի է մանաւանդ այն պատճառով, որ Անգլօ-հայկական ընկերութեան կարգադրութեան տակ եղած գումարները հայկական ազգիւրներից են, այսինքն Ռուսաստանի հայերից։ Այդ ստերլինգների փոխուած ռուբլիները ծառայում են իբրև վարձ անգլիացոց «վեհանձն» ազիտացիայի։ Մինչև անգամ ընկերութեան անդամների իրենց հայրենիքում ճանապարհորդելու և միտինգներին գնալու ծախքերի համար շռայլում են ռուսհայկական (?) փողեր։ Այս կատարեալ business-է, բայց մտածեցէք թէ ինչ կ'ասէին, եթէ 1875—76 թուականներին մեր պատնական կոմիտէները փող ժողովէին հերցօգովինացիներից և բոլգարներից և այդ փողերը ծախսէին գահլիճներ վարձելու, նեստերի, զրագրութեանց, հրատարակութեանց և այն բաների վրայ և միևնոյն ժամանակ մերժէին օգնութիւն տալ Տաճկաստանից փախածներին։

Այդ դեռ քիչ է։ Ընկերութիւնը շրջաբերաբար գրել է ամբողջ աշխարհի երեսին գտնուած բոլոր հայկական համայնքներին, որ յօգուտ հայերին գործելու համար կարօտութիւն ունի տարեկան հարիւր ֆունտ ստերլինգի։ Թիֆլիզի և Մոսկուայի հայերը ուղարկեցին 2000 ֆունտ, ուրեմն նոյն իսկ իրեն ընկերութեան հաշուով այդ գումարը բաւական է 20 տարի ազիտացիա անելու համար։ Բայց ի՞նչ եղաւ։ Գրեթէ հետաքրքրասիրով ընկերութիւնը նոր շրջաբերական ուղարկեց, որով կրկին փող էր խնդրում։ Այդ նոր հրաւէրին կրկին արձագանք տուին Ռուսաստանի հայերը, որոնք այս անգամ իրենց նուէրներն ուղարկեցին իրենց մի յարգելի ազգակցին, որ Լոնդոնումն է բնակվում և որին նրանք այդ պատճառով համարում էին անգլօ-հայկական ընկերութեան անդամ։ Այդ հայ ազգասէրը, իմացնելով նուիրատուներին թէ փողերն ստացել է, յայտարարել է թէ պատրաստ է յետ ուղարկել, բայց երբէք յանձն չի առնի տալ այդ փողերն այն ընկերութեան, որ արդէն պէտք եղածից աւելի հայկական փողեր է ստացել և դեռ չէ խղճահարվում կրկին պահանջել։

Ընկերութեան գլուխ կանգնած անձինք հարուստ մարդիկ են, իսկ «պատուաւոր գանձապահը» պ. Սօուն գերմանական հրէայ է, Մանչեստրում հարստացած, միլիոնատէր։ Ոչ ոք նրանց չէ կասկածում թէ իրացնում են հայերի համեստ գումարները, բայց զարմանալի է որ ոչ նրանք և ոչ հայերին համակրող ուրիշ անգլիացիք ոչինչ չեն զոհում հայկական գործի համար, այլ անգլիական շահերին նպաստաւոր ազիտացիա են վարում հայերի փողերով։ Եօթանասնական թուականներին երբ յօգուտ բոլոր ազգերին կատարուող ազիտացիայի գլուխ էին կանգնած Անգլիայում այնպիսի անձինք, որոնք այժմեան ազիտատորներից աւելի պակաս նիւթական միջոցների տէր են և անհամեմատ բարձր են նրանցից խելքով, բնաւորութեամբ և սրտով (Գլադստոն, Ֆրիման և այլք) ազիտացիան բոլոր ազգերի վրայ մի կոպէկ անգամ չնստեց, իսկ փախստականների օգնին նշանաւոր նուիրատուութիւններ էին լինում։ Այս հակադատակերը շատ ընդարձակ է և ցոյց է տալիս, թէ ներկայ դէպքում քաղաքական շահը սրբան բարձր է դասվում մարդասիրական զգացմունքից։

Միացեալ-Նահանգներում, ընդհակառակն, թագաւորում է անշահախնդիր և անկեղծ հանակրութիւն դէպի հայերը և այդ համակրութիւնը բնականաբար արտայայտվում է նիւթական նուիրատուութիւններով։ Այդ նուիրաբերութիւնից օգտվում է կրկին նոյն Անգլօ-հայկական ընկերութիւնը։ Ասում են որ նորերս դա ստացել է Նիւ-Յորքից և Չիկագոյից ահագին գումար, իսկ այժմ խօսք կայ որ Ամերիկա ուղարկուի ընկերութեան գլխաւոր անդամներից մէկը, ի հարկէ կրկին հայկական փողերով, որպէս զի նա այնտեղ ճառեր խօսէ և փողեր ժողովէ խեղճ հայերի կարիքների համար, այսինքն ընկերութեան միջոցները հարստացնելու համար։

Այս բոլոր հանգամանքների պատճառով Լոնդոնում կազմուել է «Հայկական միութիւն» բոլոր կուսակցութեանց և ուղղութեանց պատկանող հայերից. այդ «միութիւնը» համակրութեամբ վերաբերուելով հանդերձ այն ազիտացային, որ գործում է յօգուտ հայերի Անգլօ-հայկական ընկերութիւնը մտադիր է միևնոյն ժամանակ օգնել փախստական ազգակիցներին և առ հասարակ գրգռացնել տաճկահայերի կարիքները և ցանկութիւնը»։

Արտատպելով ներկայ թղթակցութիւնը, մենք համոզուած ենք որ ընթերցողը կը հասկանայ թէ «Նով. Վրէմիայի» Լոնդոնի թղթակցի խօսքերի $^{99}/_{100}$-ը, այսինքն այն բոլորը, ինչ որ նա ասում է հայ փախստականների դատած ընդունելութեան մասին, անգլօ-հայկական ընկերութեան մասին, հայկական և այն էլ Թիֆլիզի փողերի մասին, բոլորը անբարեխիղճ սուտ է. իսկ ինչ վերաբերում է Լոնդոնի «ազգասէր հային», մենք չենք հաւատում, թէ Լոնդոնում այդպիսի անմիտ հայ լինի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԱՅՏՆԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ»

—

Այս տարուայ նոյեմբեր ամսին լրանում է նշանաւոր հայ գիտնական Դեր. Հայր Արսէն արքեպիսկոպոս Այտնեանի քահանայագործութեան և գրական գործունէութեան յիսուն տարին։ Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը և հայկական գաղութի ներկայացուցիչները վճռել են տօնել նշանաւոր գիտնականի յոբելեանը և այդ օրուայ յիշատակը յաւերժացնել մի բարի հիմնարկութեամբ, որ պիտի կրէ «Այտնեան արուեստագիտական հիմնարկութիւն» անունը։

Դերապատիւ Հայր Այտնեանն այնքան մեծ ծառայութիւն է արել հայ գրականութեան և այնքան գանձ է գանձել մեր լեզուի համար, որ յոբելեանի կարգադրիչ յանձնաժողովի մտադրութիւնը «արուեստագիտական հիմնարկութիւն» հաստատել նորա անունով, վերին աստիճանի համակրելի պէտք է լինի ամենքի համար։ Յանձնաժողովի շրջաբերական ծանուցումից մենք իմանում ենք որ նրա նպատակն է «վարչական ժողովոյ մը առաջնորդութեամբ արուեստը (Յաճկաստան, Պարսկաստան, Ռուսաստան են.) հայ ազգատ պատանիներ Վիեննա բերել տալ և այդտեղ պարզ ձեռագործ արուեստներ սովորեցնել 3—4 տարի և վարպետ հանելէն ետև վերադարձնել»։

Խօսել արհեստների կարևորութեան մասին, այդ կը նշանակէ այրուբենական ճշմարտութիւններ յիշեցնել, մանաւանդ հայ ազգի մէջ, որ միշտ սէր է ցոյց տուել դէպի արհեստը։ Սակայն որքան որ հայը սէր ունենայ դէպի արուեստը, այնքան նրա գիտեցած և բանեցրած արհեստները քիչ են և այդ եղածներն էլ իրենց նահապետական, գրեթէ նախնական դրութեան մէջ են գտնվում։ Մինչև այժմ մեր արհեստաւորը չէ կարողանում օգտուել եւրոպական մշակուած գործիքներից և իր արհեստի մէջ նա շարունակ աւելի իր փիղիքական ոյժն է գործ դնում քան գործիքները։ Բացի դրանից եղած արհեստների թիւը սահմանափակ է և մեր մէջ գործածութիւն չունին դեռ ևս այն բազմաթիւ արհեստները, որոնք առաջ են եկել եւրոպական քաղաքակրթութիւնից։ Ամեն օր մենք պէտք ունենալով զանազան առարկաների, թանկ գներ ենք վճարում այն չնչին առարկաներին, որոնց եւրոպական նուրբ արուեստը տուել է որոշ ձև, որոշ գեղեցկութիւն։ Մի կտոր հարթած փայտին, մի կտոր ճարտար հիւսած ծղոտին, մի կտոր ձևակերպած ապակուն, կաւին, մետաղին մենք վճարում ենք նրա տասն անգամ աւելի արժէքը, միայն այն պատճառով որ այդ առարկան պատրաստուած է հեռու երկրում, օտար արհեստաւորի ձեռքով, մինչդեռ այդ առարկաների նիւթերով լի է մեր երկիրը, բայց նրան մշակող ձեռք և արհեստաւոր չկայ։

Ամբողջ Կովկասում երկու երեք արհեստաւորաց դպրոցներ կան և նրանց մէջ սովորեցնում են միայն հիւսնութիւն, փականագործութիւն, դարբնութիւն և խառատութիւն. իսկ մնացած արուեստների մասին մրատծող անգամ չկայ, մինչ դեռ եւրոպայում արուեստների թիւը հարիւրներից անցել է և ոչ միայն կիրառում է միլիոնաւոր աշխատաւորների, այլ և երկրի արդիւնաբերութեան ամենամեծ գործօններից մէկն է դարձել։

Ուստի հասկանալի է թէ ինչ մեծ բարիք է մեր երկրի համար, եթէ նա մի 10-15 տարուց յետոյ ունենայ եւրոպայում սովորած արհեստաւորների մի դասակարգ, որի անդամները ցրուելով երկրի այս և այն կողմերը իրենց սովորած արուեստները գործադրեն երկրի նիւթերի մշակման և նրանց արտահանութեան։

Մեր ժողովուրդը որ արուեստասէր է, այդպիսիներին կընդունի գրկաբաց և շատ շուտով կընկերանայ նրանց աշխատութեանը և կը տարածէ ամեն տեղ թէ նոր արուեստները և թէ նրանց մշակած նիւթերը։

Երևում է որ Դեր.Հայր Այտնեանի յոբելեանի համար կազմուած յանձնաժողովը այդ բոլորն ի նկատի ունենալով վճռել է ձեռնամուխ լինել «արհեստագիտական հիմնարկութեան» և նա արժանի է քաջալերութեան բոլոր հայերի կողմից։

Բայց մենք թոյլ ենք տալիս մեզ յանձնաժողովի ուշադրութեանն առաջարկել մի շատ կարևոր հարց.— Արդեօք չէ՞ր կարելի որ այդ արուեստագիտական հիմնարկութիւնը կըրէր միևնոյն ժամանակ և «ուղղիչ ապատանարանի» բնաւորութիւնը այնպէս, ինչպէս այդ կայ Անգղիայում և Ամերիկայում, որ բազմաթիւ անխնամ և փողոցային կեանքին զոհ մատնուած մանուկներ սովորում են զանազան արհեստներ և որոշ դասընթաց անցնելուց յետոյ դառնում են հասարակութեան ամենալաւ անդամներ։ Առաջին յաջող փորձն այդ ուղղութեամբ այնքան համակրողներ կըտար «Այտնեան արհեստագիտական հիմնարկութեան», որ նա հայ ազգի ամենաժողովրդական և նշանաւոր հաստատութիւնը կը դառնար։

Այս ի՞նչ հարկէ միայն մի առաջարկութիւն է մեր կողմից, որ յարգելի ծանձնաժողովը կարող է և յարմարութիւններ չունենալ իրագործելու. սակայն դրանից ամենքին չէ՞ հետաքրքրում, թէ «արուեստագիտական հիմնարկութեան» միտքը մի մաղաչափ անգամ նոսրանում է։ Ընդհակառակը մենք յայտնում ենք մեր խորին համակրանքն այդ մտքին և ամենայն ուրախութեամբ հրատարակում ենք հայերին նիւթապէս նպաստել այդ բարի և վերին աստիճանի օգտակար հիմնարկութեանը։

* * *

Լոնդոնի Ալպեան կլուբի (Alpine club) նախագահ Դուգլաս Ֆրէշֆիլդը հրատարակելու է Կովկասի մի ընդարձակ նկարագրութիւն «The Exploration of the Caucasus» վերտառութեամբ։ Այդ գրքի մէջ կը տպագրուին Ալպեան կլուբի անդամների այն բոլոր հետազօտութիւնները կենդրոնական Կովկասի վերաբերմամբ, որ նրա կատարել են վերջին տասնամեակների ընթացքում, այլ և այն տեղեկութիւնները, որ հեղինակը ժողովել է Կովկասում անցկացրած երկու ամառների միջոցին. նկարագրութիւնը երկու մեծ հատոր կը կազմէ և 170 պատկերով զարդարուած կը լինի։ Գիրքը լոյս կը տեսնէ այս աշնանը հրատարակութեամբ Էդուարդ Արնոլդի գրավաճառոցի։

* * *

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են թէ հաստատուած է պետական արուեստաւորաց դպրոցների նոր ծրագիրը։

* * *

Թիֆլիզի նահանգական դատարանի վարչութիւնն ի նկատի ունենալով Կարս-Թիֆլիզեան երկաթուղու շինութիւնը, մտադիր է իր ճարտարապետի միջոցով ուսումնասիրել Բօրչալուի գաւառում օժանդակիչ գծեր կառուցանելու տեղերը և ապա այդ գծերն անցկացնել։

* * *

Երևանի քաղաքագլուխ բժշկ. պ. Լեւոն Տիգրանեանը հրաժարուել է իր պաշտօնից։ Պատճառն ինչպէս ասում են, նահանգական ատենի, նահանգապետի և քաղաքագլխի մէջ ծագած տարաձայնութիւններն են։

* * *

Թիֆլիզի քաղաքագլխի ընտրութեան հարցը կարելի է վճռուած համարել, որովհետև ինչպէս լսում է իշխան Նիկողայոս Արղութեան-Երկայնաբազուկը համաձայնուել է քուէարկել։

* * *

Մինչև այժմ միայն մի փորձնական ագարակ կար Կովկասում բամբակի մշակութեան համար. այդ Ղարայազի ագարակն էր, իսկ այժմ այդպիսի ագա-

---

երիտասարդները և աղջիկներն ուտում են ազի բաղարջ և ի հարկէ ծարաւում։ Եւ ով որ նրանց ջուր կը տայ գիշերուայ երազում՝ նա կը լինի կամ հարսը կամ փեսան։ Մեծ նշանակութիւն ունի նաև այն ամանը, որով տրվում է ջուրը— արդեօք կաւէ, երծաթէ, թէ՞ ոսկու, որովհետև զոյգի կեանքն էլ ըստ այնմ կամ հաստակ կը լինի և կամ երջանիկ ու հարուստ։ Իսկ եթէ ամանը կոտրած լինի, ամուսիններից մէկը շուտ կը մեռնի։ Սովորաբար հայ պատանին կին է առնում այն աղջկան, որին կ'ընտրէ իւր հայրը, եթէ նոյն իսկ տեսած էլ չլինի նրա դէմքը։ Սնոտի նախապաշարմունքները և ընութեան հին հաւատալիքները անչափ տարածուած են հայոց մէջ։

Լուր օրերը նրանք արշալուսից մինչև արևի մայր մտնելը զբաղուած են,— աղամարդիկ հոգ տանելով ձիերի, ոչխարների ու տաւարի մասին և կամ բրդէ ոստայն հիւսելով, երկիր հերկելով, հնձելով, և կամ եթէ ուներ են, վարձկան մշակների աշխատութեան վերահսկելով. իսկ կանայք սովորաբար կով են կթում, մածուն, կարագ, չորթան, պանիր են պատրաստում և միասին ասղնագործ զարդեր կարում, բուրդ մանում։ Ամառուայ երեկոները կամ ձըմրան գիշերները միասին հաւաքուելով բանելիս՝ նրանք երգում են, սակայն ցաւելով պիտի ասեմ, որ այդ երգերը, սակաւ բացառութեամբ, բոլոր ազգային երգեր չեն։ Կան մի քանի հատուկտոր մնացորդներ նախկին գիւցազնական երգերից, առասպելներից ու վէպերից, բայց գրեթէ մոռացուելու վրայ են։ Նրանց զուտ տեղական երգերը լի են խըրթին ակնարկներով և գաւառական ոճերով։ Դարբինները, որոնք մասամբ և հանքահաններ են, ունին իրենց յատուկ երգը, որի ծայրայանգը հետևեալն է».

Ցորենի տեղ կուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր-ցորեկ.
Շինեմ փէտատ, խոպ, խամբրկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ։

Միւս երգը որ աւելի տարածուած է ժողովրդի մէջ, այսպիսի տուներ ունի, որոնք բառ առ բառ համապատասխան են իսկութեան.

Երբ որ բացի աչքս այս աշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչև փակիմ աչքս ի խաւար,
Պիտ չկոխէ հոս ոտք օտար։
Իմ մամ ծնաւ գիս պալու ծոց,
Ինձ ընկոյզ կոճ մը եղաւ օրրոց,
Տըկլոզ ծնած, մեծցայ տկլոզ
Դէմ արևու սասիկ հողմոց։
Զէնքս է միակ իմ խաղալիկ,
Կ'ատեմ հանդարտ կեանք խաղալիկ.
Կըսիրեմ սրս, կռիւ, աւար,
Կըսպասեմ՝ երբ կընկնի հաւար։
Գիշեր զէնքս վրաս քնեմ,
Երազիս մէջ կռիւ կենեմ.
Կռուելն ինձ մօտ խաղալ է,
Կռուելով մեռնելն ինձ հալալ է։

Այդ լեռնարնակ, թիւրգոյն, կարծր ու ամուր կորիճներն երբեմն երգում են և նոր բանաստեղծների, նաև Ռափայէլ Պատկանեանի և Միհրան Դամատեանի երգերը,—Դամատեանի, որ մի քանի ժամանակ առաջ բանուեցաւ Թիւրքերի ձեռքով, բայց յետոյ խորհրդապէս անհետացաւ։

Սասունցիք սիրով կարդում են, կամ լաւ է ասել՝ կարդում էին ձմրան գիշերներն ականջ դնելով դաուլ-զուրնայի ձայներին, մինչդեռ զուրսը մըռնչում էր բքաբեր հողմը։ Աշուղներն և կամ թափառական երգիչները, որոնց թիւը Հայաստանում լեգիոն է, միշտ վստահ էին ընդունելութիւն գտնել իրենց արծաթանչիւն թառերով։ Այդ աշուղներից շատերն իրենց յանկարծասած երգերով ընդունակ էին մինչև արտասուք շարժել յուզել ունկնդիրների բազմութիւնը և կամ թէ հոմերական ծիծաղ ու քրքիջ յարուցանել։ Յետոյ գալիս էին հրաշքներով լի հեքիաթներ, զուարճալի անէկդոտներ, հին հին զրոյցներ ու սրամիտ կատակներ, և երեկոն վերջանում էր զուարթ քէֆով, «որից միշտ կարօտ է մնում մարդու սիրտը»։

Այսպէս են, և կամ թէ այսպէս էին սասունցիք։ Փ. Ղ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆՆ

—

Պ. Խմբագիր.

Թանկ գնահատելով մեր ժողովրդական անգիր բանահիւսութեան արտադրութիւնները, որոնք դեռ խպառ չեն մոռացուել ժողովրդի բերանում, մենք, որքան ներել են մեր թոյլ ոյժերը, աշխատել ենք հաւաքել և գրի անցնել նոցա։ Սորա հետ միասին մեր ժողովածուից խմբագրութեանդ ուղարկելով մի շարք երգեր, խնդարտաբար խընդրում եմ հիւրընկալել նոցա Ձեր պատուական թերթի էջերում։

Մեր ժողովածուն, որ վերցրած է Ասալչխայի և մասամբ էլ Զամախու կեանքից, իր մէջ պարունակում է բաւական քանակութեամբ երգեր, ջանգիլումներ, հանելուկներ, շուտասելուկներ և առածներ։

Ընդունեցէք և այլն.

Տիգրան Վարդանեան։

15 ապրիլի, 1895 թ.
Զամախի։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1

Հոգին մարմնին կսէ.
—Ես քեզի մէ բան մը ըսեմ.
Հարամը մի՛ ուտի,
Հալալը խիստ լաւ կըլլի։
Օրն իրեք անգամ
Երթանք ժամատուն,
Էնինք ծունը ու աղօթք.
Լալը լաւ կըլլի։
Մարմինը հոգուն կսէ.
—Ես չեմ էրթայ ժամատուն,
Տիրեմ կը աշխարին,
Մալը լաւ կըլլի։
Կարմիր գինի խմինք
Արծաթայ թասով,
Էնենք սար ու սաֆան.
Ալը լաւ կըլլի։
Հոգին մարմնին կսէ.
—Դու ի՞նչ գիտես խէրը,
Քնէ՛ մեր մեղքը
Միածին Տէրը։
Էրթանք քարին ճգնինք
Վասն Աստծու սէրը,
Հագնինք մազեղէն
Ձալը լաւ կըլլի։
Մարմինը հոգուն կսէ.
—Ո՞վ է մեր խապար,
Էրթանք Հինդիստան,
Բերենք անգին քար։
Մալովս խան ըլիմ,
Լեզուովս ճարպար.
Ով որ խաղնա ունի,
Հալը լաւ կըլլի։
Հոգին մարմնին կսէ.
—Ո՞վ է մեր խապար.
Ի՞նչ էնեմ խաղնադ,
Փուչ է անգին քար,
Ջրէն ցած կեցի,
Մի բարձր ման դա.
Աղքատ մարդուն
Բարև տալը լաւ կըլլի։
Մարմինը հոգուն կսէ.
—Օսկի կը թափեմ,
Ծովը կը լցնեմ,
Գետերը կապեմ։
Ուրտեղ որ ըռունդըմ կայ
Առնեմ ու խափեմ,
Հագցնեմ աթլասը.
Ալը լաւ կըլլի։
Հոգին մարմնին կսէ.
—Ա՜յ յիմար տիմար,
Աշխարքին բաներէն
Դու չունիս խապար։
Քնէ՛ մեր մեղքը,
Զգէ՛ մութ աշխարհ.
Մեղաւոր ճամբեցէն
Ետ դառնալը լաւ կըլլի։
Մարմինը հոգուն կսէ.
—Ես քեզի մեղայ,
Հեար ուր որ էրթաս
Հետդ գալը լաւ կըլլի։
Հոգին մարմնին կսէ.
—Էրթանք դատաստան.
Մեր տէրն ա մէ օրըմ
Կանէ կը հախ դիւան
Ուռնայու կալը լաւ կըլլի։

Ծիրա զիւղ։

—

2

Զատ մի՛ վազիր դաղիդ բանիդ,
Ականջ դի՛ գրքին խրատին,
Ականջ էրէ Աստրծու Դատին,
Դառ մեղքերէդ դարձ դաս պիտի։
Ուղիղ սրտով բանէ՛ պասը,
Սրբէ՛ նէսրգիուդ փասը,
Անարժան մի՛ առնի մասը,
Սիրագ մաքուր ու խաս պիտի։
Ըսէ՝ փոշման եմ էրած բանիս,
Երբ պիտի խոստովանիմ քահանային։
Վերջը Աստրծու Դիւանին
Համար ու հաշիւ տաս պիտի։
Ողորմութեան դուռը որ բանաս,
Առաւօտեան ժամ պիտի դաս.
Աստրծու Դիւանին որ կայնիս,
Դառ մեղքերդ դու լաս պիտի։

Ծիրա։

—

3 ՏԻՐԱՄՕՐ ԱՂՕԹՔ

Մարիամ, ողջո՛ւն քեզ, կուս ես,
Հոգով մարմնով լուս ես.
Հագել ես լուսեղէն կամար.
Հոգիս պահեմ քեզի համար։
Տուր ինձի իշխանութիւն,
Հոգուս գործեմ բարութիւն.
Գրկել ես լուսեղէն որդի,
Մէջքին կապել օսկի գօտի։
Մարիամ, քո՛ւն ես թէ զարթուն
Ոչ քո՛ւն եմ, ոչ զարթուն.
Քուն էղայ էրած տեսայ,
Էրծիս վրայ զարհուրեցայ։
Բէլզէհէմ քաղաք ընծայեցայ,
Խանձարուրով բալուլուեցայ,
Անուշ հոգով շաղվըվեցայ,
Գլխուս վրայ քաւորուեցայ։
Մի՛ ես զարթի, Մարիամ, դու կուս ես
Հոգով մարմնով լուս ես.
Գետ Յորդանան մկրտեցին,
Փշով երեսը ծեծեցին։
Խաչուեցաւ խաչելատօն,
Վրան առաւ ծիրան փիլօն։
Մարտիրոսաց շարշարութիւն
Իմ մեղաց թողութիւն։
Մեր Տէրը խաչը հանուեց,
Խաչին վրայ շարչրուեց,
Խաչէն իջաւ գժոխքն աւրեց,
Ադամ Եւայ գժոխքէն հանեց։

Ծուրղուլ։

—

4. ԳԺՈՒԱՐԱԹԻՆ ԴՆՆԴԱՆԱՆ ԱՂՕԹՔ

Տաք հացի հոտ էկաւ.
Էլէք, աշեցէք, ո՛վ եկաւ։
Իրեք ձիաւոր հրեղէն
Էլան սարով, իջան ձորով։
Մէկն էր Յիսուս, մէկը Քրիստոս
Մէկը մանուկ տղայ սուրբ Մարիամ
Մէկը՝ սուրը սատանին.
Մէկը՝ նեռը գազանին.
Մէկը՝ չարը խափանի։

բակներ հիմնվում են նախարարութեան կարգադրութեամբ Քութայիսի նահանգում և Դանձակի նահանգի Ազչի գաւառում Աղդաշ գիւղի մօտ։ Այդ բոլորի համար յատկացրած է այս տարի գանձարանից 12,000 ռուբլի։

* * *

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, Ապրիլի 14-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Երէկ, ամսոյս 13-ին, տեղւոյս Կայսերական բժշկական ճեմարանում ամենայայտնի կերպով պաշտպանեց իւր բժշկապետական դիսերտացիան մեր հայրենակից բժիշկ Մինաս Զաքարբէկեանցը։ Տասը տարի գործնական բժշկականութեամբ (բացառապէս Կովկասում, Բաքու քաղաքում) պարապելուց յետոյ և մի տարուց աւելի Փարիզի աշխարհահռչակ գիտնականների (Պաստէորի, Ռուի, և այլ պրոֆեսորների) աշխատանոցներում (лабораторія) կատարելագործելով իւր բակտերիոլոգիական հետազօտութիւնները, անցեալ տարի պ. Զաքարբէկեանցը իրան պատրաստ համարեց բժշկապետական քննութիւն տալուն, որ և յայտնի կերպով կատարեց։ Իսկ նրա երէկուայ պաշտպանած դիսերտացիան բժշկապետութեան աստիճան ստանալու համար մի բարեխիղճ ու լուրջ հետազօտութեան արդիւնք է ընդհանրապէս կաթի և մասնաւորապէս Պետերբուրգի կաթի մասին, որ պ. բժշկապետը քննում է և վերլուծում բակտերիոլոգիական տեսակէտից։ Շնորհ կամենում երկար կանգ առնել թէ պ. բժշկապետի ընտրած նիւթի կարևորութեան և թէ նրա գեղեցիկ քննութեան արդիւնքների վրայ, այսքանը կ'ասենք միայն, որ ինչպէս մենք տեսանք, հակաճառող պրոֆեսորները ոչ միայն առարկութիւններ չարեցին այս նշանաւոր, ուսումնական աշխատութեան եզրակացութիւնների դէմ, այլ և մէկը միւսի ետեւից իրենց գոհունակութիւնն ու շնորհակալութիւնները յայտնեցին հայ բժշկին։

Ս. Պետերբուրգի համալսարանի ուսանող՝ Յովակիմ Յովհաննիսեան։

* * *

ԱԽԱԼՑԽԱ, 11 ապրիլի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Մենք զրել էինք մեր թղթակցութեան մէջ, որ քաղաքիս մուտքը չի ծածկում ծախսը, շարունակ ամեն տարի քաղաքը դէֆիցիտ է ունենում։ Այդ առիթով տեղիս քաղ. ուսուցը դեռ անցեալ տարի խնդրամատոյց է եղել ուր հարկն է նպաստ խնդրելու միջոցաւորկ քաղաքների համար եղած յատուկ գումարից։ Խնդիրն առ այժմ առկախ է մընացել, յայտնի չէ, թէ ինչ վախան կըստանայ։

Քաղաքային գրամարկղը նիւթական կրկղիսի մէջ է բառիս բուն մտքով։ Մէջտեղ փող չկայ։ Քաղաքային Վարչութեան ծառայողները՝ ամիսներով ռոճիկ չեն ստանում։ Ծառայողները իրանց վարձատրութիւնը բացի անժամանակ և ուշ ստանալուց, ամբողջովին, լրիւ չեն ստանում, այլ մաս-մաս, ողորմութեան ձեւով։ Քաղաքային գրամարկղը փող ներս մտնելուն պէս՝ վրայ են թափում իսկոյն ծառայողները. որին՝ մէկ, որին՝ երկու ռուբլի է պրում և կամ քիչ աւելի, և այս ձեւով—քաշքշոցով է շարունակւում գրեթէ միշտ ռոճկի բաշխման գործը։ Քաղաքային գրամարկղի դրութիւնն իսկապէս յուսահատական է. եթէ այս կերպ շարունակուի, նպաստ խընդրելու վերաբերութեամբ քաղ. ուսուցի միջնորդութիւնը չանցնի, այն ժամանակ քաղաքը վայ տալու կը դառնայ, մնանկ հրատարակելու բաղդին կարժանանայ։ Քաղաքի մուտքը և ծախսը քննելու ժամանակ, ճիշտ է, պ. պ. լիազօրները ամենայն ջանք գործ դրեցին ծախսի յօդուածները կրճատելուն, սակայն և այնպէս նրանց այդ կրճատումներից մի բան դուրս չեկաւ, խնայուեց մի շատ աննշան գումար։ Լիազօրների կրճատումներից, մեր կարծիքով, քաղաքը մի առանձին էլ շահ չունեցաւ, ըստ որում այդ եղաւ (քիչ բացառութեամբ) այն յօդուածներում, որտեղ ընդհանրութեան շահերն էին շօշափւում։

Քաղաքի այս օրինակ դրութիւնն առաջացել է նրանից, որ քաղաքը իր կարողութիւնից ու իր այժից վեր պարտաւորութիւններ է ստանձնած։ Տեղիս զօրաց վրայ քաղաքային գրամարկղից տարէնը մօտ 12000 ռուբլի է ծախսւում, որ միանգամայն անկանոն է։ Օրէնքով քաղաքը պարտաւոր է հոգալ միայն տեղական վաշտի (мѣстный гарнизонъ) բնակարանը և որոշ պիտոյքները, մինչդեռ մեզանում քաղաքի վրայ ծանրացած է ամբողջ զօրքը։ Թէ Ռուսաստանում և թէ նոյնպէս ամբողջ Կովկասում զինուորականների բնակավայրը (квартирныя) և այլ որոշ պէտքերը հոգում է պետական գանձարանը, այն ինչ Ախալցխան, և ինչպէս տեղեկացանք, Գօրին իրանց վրայ են առած այդ պարտաւորութիւնները։ Զօրաց վրայ եղող այդ ծախսը քաղաքի այժից վեր է, դրա բարձման մասին լիազօրաց ժողովը յանձնարարեց քաղաքային աւագին խընդրամատոյց լինելու պ. Նահանգապետին։ Զօրաց ծախսը քաղաքի ընդհանուր մուտքի գրեթէ կէսն է կազմում։

Եթէ քաղաքի վրայից այդ պարտաւորութիւնը բարձուի, այն ժամանակ միայն կարող կը լինի քաղաքը փոքր ինչ բարեկարգուել, այլապէս քաղաքի ամենաանհրաժեշտ պէտքերի հոգալը, նրա փոքր ինչ բարեկարգ դրութեան բերելու վրայ մտածելը՝ ցնորք կը լինի։ Քաքաղը ուրիշ ելք չունի,—այդ է միակը։

Քաղաքը մի ուրիշ՝ իր այժից վեր պարտաւորութիւն է առել կամովին իր վրայ, որ սակայն երբէք չէ իրականացրել։ Մի քանի տարի առաջ քաղաքային դուման վճիռ է կայացնում տեղիս քաղ. գպրոցին նպաստ տալու։ Այդ վճռին համաձայն չէ լինում քաղաքագլուխը, քաղաքի նիւթականը ի նկատի ունենալով, սակայն նպաստ տալու պարտաւորութիւնը հէնց վճռի օրից գործադրութիւն չէ գտնում։ Եղածից է պրում, չեղածից խօմ ստեղծել չի լինի։ Քաղաքային գպրոցին տրուելիք նպաստը գնալով տարէց տարի բարդվում է, ներկայիս մօտ տասն և մէկ հազար ռուբլու է հասել։ Շենք հասկանում, թէ այն ժամանակ քաղաքային դուման ինչ հիմունքներով առաջնորդուած մի այդպիսի վճիռ է կայացրել։ Մթթէ դումային յայտնի չէր, որ քաղաքի միջոցները չեն նեղում մի այդպիսի նպաստ տալու քաղ. գպրոցին։ Քաղ. դումայի այս վճիռը «après nous le déluge» առածի իմաստի համապատասխան գործ չէ...

1892 թ. խօլերայի համաճարակի ժամանակ քաղաքը պետական գանձարանից համաճարակի դէմ մաքառելու համար 7000 ռ. է ստացել փոխարինաբար, որ և պարտաւորուել է տասը տարուայ ընթացքում վերադարձնելու, վճարելով տարեկան 700 ռ.։ Քաղաքը մինչև այժմ դեռ ոչինչ չէ վճարել։ Ահա թէ ինչ աննախանձելի վիճակի մէջ է քաղաքիս նիւթականը։

Լիազօր։

* * *

ԲԱԳՈՒԻՑ գրում են «Տիֆլ. Լիստ.»-ին։ «Այժմ մեզ նոր համաճարակ է սպառնում։ Մէշկեդում (Պարսկաստան) երևացել է ըծաւոր տիֆ (տարինք) և հիւանդութիւնն արդէն վտանգաւոր կերպարանք է ստացել, ուստի Մէշկեդի ռուսաց հիւպատոսն այդ մասին տեղեկացել է Բագուի վարչական իշխանութեան, որ կարևոր միջոցներ ձեռք առնուին թէ Բագուն և թէ Անդրկովկասը պաշտպանել ըծաւոր տիֆի վտանգից։ Ինչպէս յայտնի է այդ հիւանդութիւնը խօլերայից աւելի սարսափելի է, սաստիկ վարակիչ է և մեծ զոհեր է տանում մանաւանդ բժիշկներից։ Բագուի նահանգական իշխանութիւնը հիւպատոսի հաղորդած լուրին շատ լրջութեամբ վերաբերուեց և վճռեց կարանտին սահմանել։ այդ նպատակով կիւրակէ օրը, ապրիլի 16-ին, Զրկի կղզին գնացին փոխ-նահանգապետը, մաքսատան գլխաւոր կառավարիչը և բժիշկները հիւանդների համար այնտեղ շինուած ապաստանարան - բուժարանները տեսնելու»։

* * *

Շաբաթ, ամսոյս 22-ին, կայանալու է դաշնակահար Նիկողայոս Լիստովնիչու վերջին հրաժեշտի նուագահանդէսը։ Պ. Լիստովնիչը քաջ յայտնի է Թիֆլիզում իբրև հմուտ երաժշտ և ուսուցիչ։ Նուագահանդէսը լինելու է «Արտիստական ընկերութեան» դահլիճում երգչուհի տ. Դէ-Վոս-Սորոլեվի և պ. Կավալինսկու մասնակցութեամբ։ Սկիզբն է ժամը $8^1/_2$-ին երեկոյեան։

* * *

Այսօր Թիֆլիզի արքունական թատրոնի ռուսաց դրամատիկական խումբը կը ներկայացնէ մեր նշանաւոր դրամատուրգ Գ. Սուդերմանի «Մուսիններ» կոմեդիան ռուսերէն լեզուով։ Ինչպէս լսում ենք յարգելի հեղինակը իր պիէսի վերջին գործողութեան մէջ էական փոփոխութիւններ է մացրել։

* * *

Սատանայի «Դրօշակ» փոքրիկ զբաղարանը, պատմուածք Գ. Լիֆօրի, թարգմանութիւն Գէորգ քահանայ Մկրտումեանցի։ Գրքոյկի նիւթը գեղեցիկ է և կրթիչ, լեզուն բաւական սահուն. գինն է 8 կոպէկ։

* * *

Բագուեցի հարուստ Հաճի Զէյնալ Աբդին Թաղիեվը նուիրել է 1000 ռուբլի Պետերբուրգում մահմեդականների համար մզկիթ կառուցանելու համար։ Ս. Պետերբուրգի մահմեդական ախունդ Բայազիտովը մայրաքաղաքի մահմեդականների կողմից յայտնում է իր շնորհակալութիւնը պ. Թաղիեվին։

* * *

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԹԱՏՐՈՆ

(Ռուսաց ներկայացումները)

Ռուսաց դրամատիկական խումբն այս տարի կազմակերպուած է բաւական յաջող և նրա ներկայացումները շարունակ հասարակութիւնից էին գրաւում թատրոն. բայց ինչ որ շար ոգի նեղնշեց այդ խմբին ապրիլի 17-ին Թիֆլիզի բեմի վրայ դնել մի ինչ որ անյայտ Սիկեվիչի խայտառակ կոմեդիան «Լուսաւորութեան ծաղիկները» վերնագրով։ Այդ կոմեդիան մի կատարեալ փողոցային պարոդիա է, որ գրուած է փիլիսոփայ-բարոյագէտ կոմս Լև Տօլստոյի «Լուսաւորութեան պտուղները» տաղանդաւոր գրուածքը ծաղրելու համար։ Սիկեվիչի «Լուսաւորութեան ծաղիկներ» պիէսը ամբողջ պատութեան մէջ ոչ մի կարգին թատրոնի բէպէրտուարի մէջ չէ մտել և չի էլ կարող մտնել, և զարմանալի է թէ ինչպէս այժմեան ռուսաց խումբը, որ անծանօթ չէ Թիֆլիզի թատերասէր հասարակութեան ճաշակին, բեմ՝ է հանում այդ խայտառակ գրուածքը, որ ոչ միայն պաղկիլ է այնպիսի տաղանդաւոր գրողի դէմ, ինչպէս կոմս Լև Տօլստոյն է, այլ և մի կատարեալ ողբերգ է անբարոյականութեան, ցոփութեան և անառակութեան։ Պիեսի հենց առաջին գործողութեան կիսում ամենալաւ հասարակութիւնը թատրոնից հեռացաւ, լսուեցին սուլոցներ ամեն կողմից, թէ և սուլիչ։ Նուագահանդէսը լինելու է «Արտիստական ընկերութեան» դահլիճում երգչուհի տ. Դէ-Վոս-Սորոլեվի և պ. Կավալինսկու մասնակցութեամբ։ Սկիզբն է ժամը $8^1/_2$-ին երեկոյեան։

* * *

Այսօր Թիֆլիզի արքունական թատրոնի ռուսաց դրամատիկական խումբը կը ներկայացնէ մեր նշանաւոր դրամատուրգ Գ. Սուդերմանի «Մուսիններ» կոմեդիան ռուսերէն լեզուով։ Ինչպէս լսում ենք յարգելի հեղինակը իր պիէսի վերջին գործողութեան մէջ էական փոփոխութիւններ է մացրել։

* * *

Սատանայի «Դրօշակ» փոքրիկ զբաղարանը, պատմուածք Գ. Լիֆօրի, թարգմանութիւն Գէորգ քահանայ Մկրտումեանցի։ Գրքոյկի նիւթը գեղեցիկ է և կրթիչ, լեզուն բաւական սահուն. գինն է 8 կոպէկ։

* * *

Բագուեցի հարուստ Հաճի Զէյնալ Աբդին Թաղիեվը նուիրել է 1000 ռուբլի Պետերբուրգում մահմեդականների համար մզկիթ կառուցանելու համար։ Ս. Պետերբուրգի մահմեդական ախունդ Բայազիտովը մայրաքաղաքի մահմեդականների կողմից յայտնում է իր շնորհակալութիւնը պ. Թաղիեվին։

* * *

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԹԱՏՐՈՆ

(Ռուսաց ներկայացումները)

Ռուսաց դրամատիկական խումբն այս տարի կազմակերպուած է բաւական յաջող և նրա ներկայացումները շարունակ հասարակութիւնից էին գրաւում թատրոն. բայց ինչ որ շար ոգի նեղնշեց այդ խմբին ապրիլի 17-ին Թիֆլիզի բեմի վրայ դնել մի ինչ որ անյայտ Սիկեվիչի խայտառակ կոմեդիան «Լուսաւորութեան ծաղիկները» վերնագրով։ Այդ կոմեդիան մի կատարեալ փողոցային պարոդիա է, որ գրուած է փիլիսոփայ-բարոյագէտ կոմս Լև Տօլստոյի «Լուսաւորութեան պտուղները» տաղանդաւոր գրուածքը ծաղրելու համար։ Սիկեվիչի «Լուսաւորութեան ծաղիկներ» պիէսը ամբողջ պատութեան մէջ ոչ մի կարգին թատրոնի բէպէրտուարի մէջ չէ մտել և չի էլ կարող մտնել, և զարմանալի է թէ ինչպէս այժմեան ռուսաց խումբը, որ անծանօթ չէ Թիֆլիզի թատերասէր հասարակութեան ճաշակին, բեմ՝ է հանում այդ խայտառակ գրուածքը, որ ոչ միայն պաղկիլ է այնպիսի տաղանդաւոր գրողի դէմ, ինչպէս կոմս Լև Տօլստոյն է, այլ և մի կատարեալ ողբերգ է անբարոյականութեան, ցոփութեան և անառակութեան։ Պիեսի հենց առաջին գործողութեան կիսում ամենալաւ հասարակութիւնը թատրոնից հեռացաւ, լսուեցին սուլոցներ ամեն կողմից, թէ և

'ի հարկէ թատրոնում կային և այնպիսիներ, որոնց համար գեղարուեստը լպրչութիւնից չի զանազանվում։ Ցուսանք որ այդ խրատ կը լինի ռուսաց դերասանական խմբին և նրանք այսուհետև այդպիսի փողոցային պիէսներով չեն աղտոտի մեր քաղաքի բեմը։

* * *

Կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի կոյսերի խնամատարութեան հոգաբարձութեան Կովկասի բաժնի խորհուրդը մեզ խնդրում է հրատարակել 'ի գիտութիւն ընդհանրութեան, որ առ 1-ն մարտի 1895 թ. բաժանմունքի դրամարկղում եղել է 36,184 ռուբ. 98 կոպ., մարտ ամսի ընթացքում մուտք է եղել 1,284 ռ. 10 կոպ.. առ 1-ն ապրիլի մնում է 36,110 ռ. 68 կոպ.։ Այդ փոդերը գտնվում են. 1) Ընթացիկ հաշուով պետական բանկի Թիֆլիզի բաժնում 3,609 ռ. 4 կոպ., 2) նոյն տեղը տոկոսաբեր թղթերով 20,629 ռ. 72 կոպ., 3) նոյն տեղը խնայողական գանձարանում 1,754 ռ. 86 կոպ., և 4) կանխիկ բաժանմունքի դրամարկղում 117 ռուբ. 6 կոպէկ։

Մարտ ամսին բաժանմունքի աչքի ընդարձանում նոր հիւանդներ եղել են 341 հոգի, որ հին հիւանդների հետ միասին այցելել են 2306 անգամ։ Այդ նոր ժամանակամիջոցում 57 օպերացիա է եղել, որոնցից 30 դիէրեթիկ հիւանդներ են, իսկ 27 երթևեկներ են։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * * «Ռուսաց պատմական ընկերութիւնը» ներկայ ապրիլի 6-ին նիստ է ունեցել Պետերբուրգում Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսեր նախագահութեամբ։ Այդ նիստում Ն. Դուբրովիչը կարդացել է շատ հետաքրքրական պատմական դիտումներ, որոնցից ամենանշանաւորներն են Կատարինէ Թագուհու սեպհական ձեռքով գրուած բազմաթիւ թղթերը։ Մայրաքաղաքի լրագրներից քաղելով առաջ ենք բերում դրանցից մի քանիսը։ Ինչպէս յայտնի է Կատարինէ Թագուհին իր կենդանութեան ժամանակ գահաժառանգ նշանակեց իր թոռ Ալեքսանդրին, այդ իրաւունքից զրկելով իր որդի Պաւէլ Պետրովիչին, և ահա թէ ինչ է գրում այդ առիթով հանդուցեալ Թագուհին.

«Պէտք է խոստովանել, որ դժբաղդ է ծնողը, երբ ստիպուած է լինում ընդհանուր գործի փրկութեան համար հեռացնել գործից իր հարազատ զաւակին։ Այստեղ արդէն միանում են երկու իշխանութիւնները—ինքնակալական և ծնողական։ Եւ այսպէս ես համարում եմ, որ իմաստնագոյն կայսր Պետրոս I. անկասկած, ամենամեծ պատճառներ ունէր հրաժարեցնել իր անշնորհակալ, անհնազանդ և անընդունակ որդուն, որ լցուած էր նրա դէմ ատելութեամբ և նենգ նախանձով. նա (Պաւէլ) իր հօր բարի գործերի դամբիւղի մէջ չարութեան մի փոշի էր փնտռում, լսում էր իրեն շողոքորթողներին, հեռացնում էր իր ակնոջներից ճշմարտութիւնը և ոչ մի բանով նրան չէր կարելի դուր գալ այնպէս, ինչպէս անուանարկելով նրա ազնիւ հօրը և վատ խօսելով նրա մասին։ Իսկ նա ինքը (Պաւէլ) ծոյլ էր, փոքրոգի, երկչոտ, անհաստատ, խիստ, երկչոտ, արբեցող, տգէտ, չնչին խելքի և թոյլ առողջութեան տէր»։

1788 թուին նոյն կայսրուհին հետեւեալ հրամաններն է գրում ի գիտութիւն ծերակոյտի.

«ա) Սահմանուած օրէնքներին ընթացք և այժ տալ։

բ) Ամենուրեք մտցնել և հաստատել արդարադատութիւն և օրէնքի կատարումն։

գ) Գթութիւն և հովանաւորութիւն ցոյց տալ հպատակներին՝ վտանգից ազատ կացուցանելով նրանց կեանքը, կայքը և պատիւը իւրաքանչիւրին առանձին ըստ իւր կարեաց։

դ) Առևտրին և արհեստաւորներին ընդհանուր հովանաւորութիւն ցոյց տալ։

ե) Պետութեան սահմանները յարձակումներից և ասպատակութիւններից պաշտպանել և նրանց յետ կասեցնել։

զ) Որքան հնար է քիչ ծանրաբեռնել ժողովրդին ընդհանուր հարկերով։

է) Կայսրութիւնը բոլոր մասերով մտեցնել ծաղկած և անվտանգ վիճակի։

Աւելի քան հարիւր տարի առաջ այս տողերը գրելով Կատարինէ Մեծ կայսրուհին միևնոյն ժամանակ ակնարկում էր, թէ «դրանք վերաբերում են բնականաբար Մեզ յանձնուած բոլոր մարդկանց, զանազան բնակիչներին, միմեանցից տարբեր երկրներին և այլն»։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՂԱՐԱԳԻԼԻՍԱ (Ալաշկ. գաւ.) Ապ. 2.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ընորհիւ մի ոմն Մանուկի մատնութեան ամիս ու կէս առաջ բռնուեցան և բանտարկուեցան 16 հայեր։ Նոցա դէմ յառաջ բերած միակ մեղադրանքն, որքան ես փաստական կերպով կարողացայ հաւատալանալ, այն է, որ նորա, որպէս թէ, 1893 թուի ամրան մի խընդրագիր են մատուցեր Էրզրումի ռու-

Սև հաւի հաւկիթը կուզեմ։

Ծուրղուտ։

—

16. ՌԻՏՐԱՊԱՏԻԿ (Նուրին)։

Ցօ-տօ, տօ չկայ.
Հաւաքս անեմ, եղ չկայ,
Ընկերս քինայ ծառովը,
Քինայ ընկաւ մեծ ծովը։
Զաթան բերէք, դուրս հանենք,
Քեանդուր բերէք, քշկռ անենք,
Զուն բերէք, թաթին դնենք,
Եղ բերէք վարսին քսենք.
Ցեռոյ քինանք սար ու սէյրան,
Ուտենք խմենք քէֆ անենք։

Շամախու գաւառ։

—

17. ՍՈՒՏ ԵՐԳՈՒՄ (հաւ գողացողի)։

Էվի, էվի, եվն ի վերայ,
Օտվին ի ցից խուփն ի վերայ,
Թէ ես քու հաւդ տեսայ,
Բաքճներուդ նալչան ըլիմ։

Ծուրղուտ։

—

18. ՍՈՒՏ ԵՐԳՈՒՄ (եղ գողացողի)։

Ես լինիմ էն մարաս,
Կով եմ բերել էս սարաս.
Մին տուռ ունիմ, մին կարաս,
Տակը խոզի վրան պոզի։
Վալլա բիլլա խապար չեմ։

Շամախու գաւառ։

—

19. ՀԱՐՍԱՆԻՔ

Ա՜ղջի Գարան,
Տմպլով տարան,
Զուռնով բերին,
Հօրը խարեցին,
Մօրը լացուցին,
Քուրջ հալաւ պատռատեցին,
Աղբօր շուշալ կտրատեցին։

Օժիտ։

—

Իմ աղջիկս ըռունդ է,
Մեծ իշխանին որդուն տամ,
Օխտը արաբա ջէհէզ տամ,
օխտը դաւուլ հետը տամ։

—

21. ՆԶԱՆԳՐՈՒԹԻՒՆ

Հայրը. Սև՜ ըլի էրեսը մեր իշուն.
Հօխամ ալ ազ գնաց կաշուն։
Որդին. Ի՞նչ կը խօսիս աւուր գաւուր,
Ձիս կը խաղես թիւրի թաւիւր.
Գնա, բեր զուռնա ու դաւուլ,
Ձիս կարգելու ճարը տես։

—

22. ԾՈՑԼ ԿԻՆ

Խնդա, կնիկ, խնդացուցիր,
Մէ ոտքս պարը խաղցուցիր.
Մէկը գործեցիր էս տարի,
Մէկն ա գործէ գալ տարի։

—

23. ԱՆԱՌԱՊ ԿԻՆ

Էսպէս աղջիկ ով ունի,
Ձորերով շալիկ ունի.
Մեծ գեսը բաղնիք ունի,
Մէյտանը հարսնիք ունի,
Մարգրտով կօշիկ ունի։

—

24. ՁՍՏԱԳԵՐ ՄԱՐԴ

Էլայ էրթիք, վեր վեր ընկայ.
Խաչքը կոտրաւ, ես վար ընկայ.
Գլորուեցայ, թնտիր ընկայ,
Օխտը պուտուկ տօլմա կերայ,
Էլի կըսեմ չկշտացայ։

Ծուրղուտ։

—

25. ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԵՐԱԶՆԵՐԸ

Հեքիաթ, հեքիաթ, պապս,
Ղաշդա քուռիկը տակս,
Քողքով հարսը գաւակս,
Բարդով գաթան շալակս,
Մէկ գաթան խածեմ,
Մէկ հարսը պագնեմ։

—

26. ԵՐԵԽԱՆՆԵՐԻՆ ԽԱՂԱՑՆԵԼԻՍ

Պարիրն, պարիրն,
Պար տօշանիրն.
Քրդին եայլան տուն չի տանի,
Ապրէչքմէ խալուն նստի.
Կաւէ փարչով ջուր չի խմի,
Օսկի թասով գինի կը խմէ։

—

27.

Պար, պար, կլոր պար,
Արշակ, արի Նունիկին տար.
Պար, պար չամչի պար,
Քեռին էկէ հոպա տար.
Հընը պղտիկ է մի տանի.
Կեցի մեծնայ հոպա տար։

—

28.

Պարիրն, պարիրն, պղտի շունն,
Ի՞նչ ես կատղի կարմիր շուն.
Խնկով մոմով ապրէշում
Խունկն ու մոմը խաչերուն,
Պարկով օսկին մանչերուն։

—

29. ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ՍՊԱՍՈՒՄ Է ՆԶԱՆԱԻՆ

Էրթիքը կը գըլիրտայ,
Կռես իմ եարս կուգայ,
Դուռը կը ճռճռայ,
Կրնկին ջուր լից.
Ճունը կը հաջէ,
Բերանը միս ցիգ.
Տղան կուլայ,
Ձէպը քիչմիչ լից.
Պառաւը կը պըտպտայ,
Բերանը մոխիր լից։

(Կը շարունակուի)

սաց հիւպատոսարանի թարգմանին և բարտուղարին, երբ նոքա Զարարիլիսա աւանի գծով եկան և անցան դէպի Կարս։ Բանտարկիալներն այդ մեղադրանքէն զերծ կայուցանելու համար նոյն իսկ կոմնակի անձնաւորութիւնք դիմեցին տէրութեան այդ ներկայացուցիչ պարոններին և մի հաստատ լուր խնդրեցին նոցանից. իսկ նոքա պնդեր էին, որ ոչ մի խնդրագիր չեն ստացած։ Այս վերջին զործ դրած միջոցն ևս անդօր եղաւ ազատել այդ խեղճերը կապանքից ու տանջանքներից։

Բացի այս դէպքից, դարձեալ 1893 թուի դեկտեմբեր ամսոյն եօթն ընտանեաց տէր մարդիկ խնդիր մատուցին կառավարութեան յայտնելով օրթոդոքս եկեղեցու գիրկ մտնելու ցանկութիւն։ Դոքա էին՝ Բասմաջեան Գրիգոր, Խանամիրեանք՝ Մովսէս, Կարապետ և Հայրապետ եղբայրներ, Յովհաննէսեան Յարութիւն, Բիլբիլեան Կարապետ և Գոնչոյեան Յարութիւն։

Գայմագամ էֆէնտին կարծելով թէ հայոց լնդրագրի բուն նպատակը ռուսաց հովանաւորութեան տակ մտնելն է, անմիջապէս շղթայի զարկաւ նոցա և բանտարկեց։ Խանամիրեանցների եղբայր Ենովքը տեսնելով իւր եղբայրների զործի այսչափ ձգձգում և միևնոյն ժամանակ նոցա տանջանքն ու նեղութիւնք, մի բողոք-աղերսագիր ներկայացրեց գայմագամ էֆէնտուն, պահանջելով բանտարկեալների կողմից, որ մի շուտափոյթ դատական քննութիւն նշանակուի։

Արդարութեան ու խաղաղութեան վերարկուի մէջ պլուլուած գայմագամ էֆէնտին Ենովքի այդ իրաւացի պահանջը յանդգնութիւն ու անիրաւութիւն ճանաչելով, իսկոյն հրամայեց ոստիկանաց, որ ձերբակալեն նորան և շղթայակալ բանտ նետեն։ Անիրաւութեան ներկայացուցչի այդ անիրաւ հրամանն անմիջապէս բարբարոս ոստիկանների միջոցաւ կատարուեց և խեղճ Ենովք այժմ արդէն իւր միւս արենակից եղբայրների հետ բանտի խորքում կը քաւէ իւր անգործելի յանցանքի ծանրութիւնը։

Մի քանի շաբաթ անցնելուց յետոյ միայն գայմագամ էֆէնտին, զապիթ-խանէի պետ Քէրիմ-բէյին և բաշբիաթիլ Զէմիլ էֆէնտին ի դատաստանի կանչեցին կալանաւորները և՝ հակառակ օրինաց՝ վարչութեան տան մէջ ենթարկեցին հարցաքննութեան։ Խոյս տալով առ հասարակ հարցաքննութեան խայտառակ և ամօթաբեր մանրամասնութեանց արձանագրութիւնից, պէտք է այս ասել, որ հարցաքննութեան ենթարկուածներէն միայն ութ հոգի բողոքեցին այդ գոնիակ դատավարութեան դէմ և պահանջեցին, որ՝ օրինաց համաձայն՝ իրանց հարցաքննեն ոչ թէ վարչական տան մէջ, այլ դատաստանատուն։

Գայմագամ էֆէնտին, որ նախագահն էր այդ ապօրինի տաճնին, բորբորելով նոցա այդ արդար պահանջի դէմ, մահ սպառնաց նոցա. սակայն նոքա դարձեալ մերժեցին ցուցմունք տալ։ Վերջապէս անարդարութեան դատաւորները տեսնելով, որ շատ դժուար է, գուցէ և վտանգաւոր, այդ կերպով նոցա քննութեան ենթարկելը, այս անգամ դիմեցին իրանց յատուկ խորամանկ միջոցին։ Նոքա աւանիս քիւրդ պաշտօնատար Դաւիշ Իբրահիմ ագայի սպառնական միջնորդութեամբ մասամբ դարձեալ հասան իրանց նպատակին։ Այդ դէպքում զուր անցաւ խեղճ կալանաւորների այն ճիգն, որով ճգնում էին նոքա հերքել իրանց վրայ ծանրացած մեղադրանքներն ու ամբաստանութիւնները։ Դատավարութեան այդ անուղղակի արձանագրութիւնը երկրորդ օր ուղարկուեցաւ Բայազիդ և այնտեղից, ինչպէս հաստատ ազբիւրից իմացանք, Էրզրում-կենդրոնական վարչութեան։

Քննութիւնը այսպիսով փակուեց։

Այդ եղկելիները տեսնելով իրանց կեանքի այդ տանջալի անորոշութիւն, վճռեցին անցեալ օր իրանց կողմից մի գայլանի ներկայացուցիչ պատգամաւոր ուղարկել Մուշ եւրոպական Քննիչ Յանձնաժողովին ներկայանալու համար։ Եւ որպէսզի նոքա տալով իրանց երաշխաւորութիւն ու լիազօր ներկայացուցչութիւնը իրանցից մէկի եղբօր, այն է Խանամիրեաններէն մէկուն, ուղարկեցին Մուշ՝ բողոքելու այդ անիրաւութեանց դէմ, և թէ հարկ պահանջի անգամ ի դատաստանի կոչել իրանց ներկայութեան, ուր այդ ժամանակ պատրաստ են իրանք ամենայն ինչ, ոչ միայն իրանց գլխով եկածն ու անցածը պատմելու, այլ նոյն իսկ վերջին տարիներս երբեմն լիահաց գժբաղդ Աղաշկերտ գաւառի մէջ տեղի ունեցածները մի առ մի ասել։

Անց ու զարձի խստութիւնը այլ ևս չափ չունի։ Հրաման է տրուած սահմանաբերան եղող բոլոր մուսուլմաններին, եթէ նոքա լինին անգամ ոչ-զինուորական ու ոչ-ոստիկան, հրացանի բռնել այն անցողը, որ կը ջանայ թաղատամբ անցնել դէպի Գողկա։

Նոյնպէս կրկնակի խստութեան է մատնուած հարկերի ու տրոց հաւաքումը։

Աղաշկերտցի։

Կ. Գոլոյ թերթերից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները.

ԷՐԶՐՈՒՄԻ մէջ և շրջակայքը ծաղկեալ երևան եկած է։ Կուսակալութեան խնդրանօք, Ներքին գործոց նախարարութիւնը պատուոսպի հիւթեր պիտի ղրկէ։

ՔՈՂԵՐՆ երևան եկած նահանգները ղրկուելիք բժշկական մասնոյն անդամներն որոշուած են։ Ասոնցմէ հինգը պիտի ղրկուին Պէյրութի, Ամասիայի, Հալէպի ու Սուրիոյ նահանգները, հինգը՝ Գօնեայի, Էնկիւրիի ու Պրուսայի նահանգներն և Իզմիտի գաւառը, վեցը՝ Էրզրումի, Սըվասի, Խարբերդի ու Տրապիզոնի նահանգներն և չորսը՝ Տիարպէքիրի, Մուսուլի, Պիթլիսի ու Վանայ նահանգները։

ՈՉԽԱՐԻ ՏՈՒՐՔ.—Նահանգներու մեծ մասէն տեղեկագրուած է Եմբրատական նախարարութեան, թէ ոչխարի տուրքն այս տարի հարիւրին երեսուն առաւելութիւն մը պիտի ունենայ, բազդատմամբ նախորդ տարւոյն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ և ՃԱՓՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ.—Գերմանական լրագրների մեծ մասը խիստ լեզու են զործ ածում և բացարձակ պահանջում են որ Գերմանիան չխառնուի ճափոնական զործերի մէջ և այդ մասին ոչ մի համաձայնութիւն չկայացնի Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ։ «Vossische Zeitung» «Allgemeine Zeitung» «Frankfurter Zeitung» յայտնում են թէ Գերմանիան ոչ մի քաղաքական շահ չունի հեռու Արևելքում բացի առևտրականից և ամենեին չպէտք է ձեռք ձեռքի տուած Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ գնալ և զրգռել ճափոնիային։ Կենդրոնի գլխաւոր օրգանը՝ «Germania» լրագիրը մինչև անգամ սաստիկ վրդովում է ասելով, թէ «Տարկաւոր չէ արգելքներ դարթեցնել ասիական պետութեան (ճափոնիայի) առաջ որ միակ ընդունակ է ընդդիմութիւն ցոյց տալ Ռուսաստանին, որ մեզ ևս սպառնում է մատնելով իր զօրքերը մեր սահմաններին։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԴՈՐՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ապրիլի 18-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Բուխարական արտակարգ դեսպանութիւնը այսօր ուղևորվում է Ցարսկոյէ Սէլօ։ Դեսպանութիւնը Նոցին Մեծութիւնների համար հարուստ ընծաներ է տանում, բրիլիանտներով ու ուրիշ թանգագին քարերով զարդարուած իրեր, թանգագին զէնքեր, մետաղեայ կտորներ, շալեր, մուշտակներ, զորգեր, կարած վարագոյրներ, ձիան զարդեր և շորս հեծնելու ձիեր։

Արարիայի Հեջազ գաւառը վտանգաւոր է յայտարարուած խոլերայի կողմից։

Պետերբուրգ ժամանեց զերմանական նոր դեսպան Բազոլին։

«Նով. Վր.» հեռագիրը Ցօրօլսկից.—«Դատարանը քննելով 32 անձինքների գործը, որոնք Եալուտորովի շրջանում 19 տարի շարունակ կեղծ թղթադրամներ են շինել (200,000 ռուբ. զումարի) դատապարտեց 10 յանցաւորներին տաժանակիր աշխատանքների 8-ից մինչև 9 տարի. երեք պատժից ազատուած են, իսկ մնացեալներն արդարացան։

ՕԴԵՍԱ. — «Ռուսաց Ընկերութեան» «Գոցէբու» շոգենաւը Սեվաստոպոլից առանց ուղևորների Օդեսա վերադառնալիս ապրիլի 17-ի գիշերը ընդհարուեց Թարխանկուտից 12 վերստ հեռաւորութեան վրայ «Պանդերակլիա» զինուորական շոգենաւի հետ, որ գնում էր Նիկոլաևից Սեվաստոպոլ։ «Գոցէբուան» կողքից հարուած ստանալով իսկոյն սկսեց խորասուզուել և բոլորովին ընկղմուեց, իսկ Պանդերակլիան ծանր վնասուելով ազատեց Գոցէբուի ծառայողներից 37 հոգի, այդ թւում և նաւապետին և հեռացաւ Ազմէշէդ ծոցը։ Խեղդուել են երեք հոգի «Գոցէբուի» նաւաստիներից և երկու հոգի պատահական ուղևորներ։ Ընդհարման պատճառն այն է, որ նաւերը չեն հետեւել աջ կողմից անցնելու սկզբունքին։

Ապրիլի 19-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Ապրիլի 18-ին Թագաւոր Կայսեր ներկայանալու պատիւն ունեցաւ Բուխարայի դեսպանութիւնը։

Հրատարակուած է, որ բարձրագոյն հովանաւորութեան են ենթարկվում բանտարկեալների օրդոց և անչափահասների ուղղիչ ապաստանարանները։

Ապրիլի 18-ին, ցերեկը հրդեհ ծագեց իրաւագիտական դպրոցում։ Պրակը սոսկալի արագութեամբ տարածուեց օդափոխութեան համար շինած լայն խողովակների շնորհիւ։ Հրդեհը գլխաւորապէս բորբոքվում էր սերտարանից վերև, եկեղեցու մօտ և դահլիճին կից դասարաններում։ Վնասը մօտ 50,000 ռուբլի է։

ԴՈՒԲՆՕ.—Քաղաքի կիսից աւելի հրդեհի է մատնուած։ Հրդեհաշէջների խումբ չկար։ Բացօթեայ մնացած ժողովրդի վիճակն անելանելի է։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Լսվում է թէ Միացեալ - Նահանգների կառավարութիւնը յայտնել է տէրութիւններին, թէ մտադիր է առաջուան պէս հաստատ մնալ իր սկզբունքին.—ոչ մի դաշնակցական սակարկութիւն չանել այն հարցերի մասին, որոնք անմիջապէս չեն վերաբերում Ամերիկային և վէճերը խաղաղացնելու ժամանակ բարեկամական խորհուրդներ տալու սահմանից դուրս չգալ։

ԼՕՆԴՕՆ.—Բրիտանական կառավարութեան հայեացքների մէջ արեւելեան-ասիական զործերի մասին վերջին օրերս ոչ մի փոփոխութիւն չէ եղել։ Անգղիայի և Միացեալ-Նահանգների միասին զործելը շատ հաւանական չէ, այլ միայն հնարաւոր է բարեկամական խորհրդների մաքով, որոնք երկու կողմերին ևս նպաստաւոր կը լինեն։ Անգղիան պիտի խուսափի ամենի մի դաշնակցութիւնից նոյնքան վճռապէս, ինչպէս և Միացեալ-Նահանգները և պիտի աշխատէ որ ոչ մի բարդութիւն չլինի և որ զինուորական ստիպողական միջոցների ձեռք չդարնուի։

ԶԱՆԱԶԱՆ

Ամերիկական հարսանիք։—Հռչակաւոր ամերիկական միլիոնատէր Ջէյ Գուլդի դուստրը ամուսնացաւ Ֆարիզում կոմս Կոստելանէի հետ։ Նորապսակների տունը զարդարելու վրայ աշխատում էին չլսուն այդպէսներ, որոնք զործ դրեցին քանի մի սայլ ամենաթանկագին ծաղիկներ։ Հիւրերից իւրաքանչիւրին մատուցին մի մի արծաթեայ, ներսից ոսկեզօծած սիրտ կոնֆետներով և G. K. տառերով։ Խաչ եղբայրները և նորատարսի ընկերուհիներն ըստացան մի մի ադամանդեայ քորոց։ Նորապսակներին նուիրած ընծաների մէջ կար մի մանեակ, որ սրտի ձև ունէր. մէջտեղը դրուած էր աշխարհաշէջ Էսմերիտցի կոչուած բրիլիանտը շրջապատուած 11 այլ ադամանդներով։ Բոլոր ընծաները այս տեսակի էին, առասպելական թանգութեամբ։ Երբ նոր կոմսուհու հայրը վախճանուեցաւ, ժառանգներն ստիպուած էին մէկ միլիոն դոլար ժառանգութեան հարկ հատուցանել։ Այն ինչ Ջէյ Գուլդը քաղցածութիւնից մեռաւ՝ նորա հիւանդ ստամոքսը չէր ընդունում և չէր մարսում կերակուրը։

Խմբագիր հրատարակիչ՝
ԱՐՇԱՒԻՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուտկա, Զօրանցովի արձանի հանդէպ)

Հիւանդները ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻԿՈՎԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕՏԿԻՆԱ—ՁԵՐԲԻՆԱ—10—11 ժ. կանանց ներքին հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍՍԵՒԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԿՈՐԱԳԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ, ՊՐՕՏԱՍՍԵՒԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մաքթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խիխ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումն ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.
ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի գեղերից զործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵՔՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասնաժ անող կին և մասնաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանք-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 ր.։

Ապրանք-մարդատար գնացքը Դանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 ր.։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական Ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մ՚ըէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մ՚ըէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՀՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

Բաթումից դուրս է գնում՝

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով՝ Նովոռոսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Նալտայի, Սեւաստապօլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանք-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում՝

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով։

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանք-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ԱՆՓՈՐՁ-ԳԷՈՒ
ՎԱՐՊ և ՍՈԽԱԿ
(Ոտանաւորներ)
ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԵԿ
Դիմել՝ «Կենդրոնական Գրավաճառանոց»։
(3—6)

Լոյս տեսաւ
ՎԵՀ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ
ԹԱՄԱՆԱԿ ԵՒ ԹՈՐՀՈՒՐԴ ԻՒՐ
գինն է 15 կոպ.
Դիմել Կենդրոնական գրավաճառանոց։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ի. ՇԱՂԵՐԲԻՆԻՆԱ.
Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 11½ ժամից մինչև 1-ը և երեկոյեան 6—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ տուն Ալիլովի։

Վաճառւում են՝
ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Տուրգենևի՝ «Յաղթական սիրոյ երգը», գինն է . . . . 30 կ.
Ուիդայի՝ «Ցեց» վէպ, թարգմանեալ յատաջաբանով. գինն է . 80 կ.
Թարգմ. Մարիամ Մատինեանց։

ՕՐԹԱՃԱԼՈՒ ՔԻՓԸ
ԿԱՄ
ՁԳՐՈՒ ԲԱՆ Է
Ֆարս-վօդեվիլ մէկ արարուածով
հեղինակութիւն
ԱԴԱՄ ՍԱՐԳԱՐԵԱՆ-ԱՐԵՒՇԱՏԵԱՆԻ
Գինն է 20 կոպէկ։
Վաճառւում է բացառապէս «Կենդրոնական գրավաճառանոցում»

«ԵՍԱՅԻ» (Մսուր) ընկերութեան ընդհանուր ժողովը նշանակուած է սոյն ապրիլի 20-ին ցերեկուան ժամը 1-ին, քաղաքային խորհրդի դահլիճում։ Ընդհանուր ժողովի զրաւմանց առարկաներն են. 1) մշտական անդամների ընտրութիւնը, 2) ընկերութեան գործունէութեան համառօտ հաշիւ և 3) ընթացիկ գործեր։

Կոմնակի անձինք կարող են ներկայ լինել։ 2—2

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼՈՒԶՈՒՆԵՐԻ
ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑԻ ԴՐԱՄԱԳԼԽԻ 1894 Թ. ՀԱՇԻՒԸ.

ՄՈՒՏՔ	% թղթ. ռուբ.	առ ձեռն ռուբ.	կ.
Յ1-ն յունուարի 1894 ամի մնում է.....	56,900	117	3
1894 թուի ընթացքում % թղթեր են գնուած և Արևելեան 2-դ փոխառութեան 5% բաժնետոմսերը 4% ռենտայի փոխանակելուց ստացուած է ընդամէն.	12,200	—	—
Տոկոս և շիջած % թղթերի վճար ստացուած է...	—	3,182	62
	69,100	3,299	65
ԾԱԽՔ			
Փոխանակուած է 4% ռենտայի և շիջած է.....	8,400	—	—
Դրամագլխի համար % թղթեր գնելու վրայ ծախսուած է	—	2,508	21
Դրամագլխի 1893 թուի հաշիւը լրագրներում տպագրելու համար.....	—	21	80
	8,400	2,530	1
Յ1-ն յունուարի 1895 ամի առ ձեռն պատրաստ կայ տոկոսաբեր թղթերով.....	60,700	—	—
Առ ձեռն դրամով.....	—	769	64

Ծանօթութիւն։ Կոտակուած սկզբնական դրամագլուխը 6½% 25,000 ռուբ. դրամատոմսը պահում է արքունական դրամատան Տփխիսի բաժանմունքում, իսկ մնացեալ գումարները գտնում են Մոսկուայի նահանգական գանձարանում։ Արքեպիսկոպոս Զալալեանցի դրամագլուխը պիտի աճէ 1893 թուից սկսած 125 տարուայ ընթացքում մինչ 12 միլիոնի չափ գումար դառնալը, իսկ այնուհետև պիտի յատկացուի դպրոցներ հիմնելու և նուիրաբերողի անունով թոշակներ սահմանելու։

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ այսու յայտնում է ընդհանրութեան, որ պ. նահանգապետը սոյն 1895 թուի ապրիլի 13-ին վաւերացրել է, որ երկաթուղու կայարանից կառքով մինչև քաղաք գալու համար պէտք է վճարել 60 կոպէկ, փոխանակ առաջուան 75 կոպէկի։ (3—1)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԳԱՐԵԳԻՆ ՋԻՒԼՆԻ ԼԵՒՈՆԵԱՆԻ
„ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ“
անուն գործը
Պատմական տեսդրիւն
ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ
(1794—1894)
Բազմաթիւ ծանօթութիւններով։

(Արժանացած է Սահակ-Մեսրովպեան մրցանակաբաշխութեան 1894 թ. Առաջին Մրցանակին)։

Սոյն երկը բաղկացած է մօտ 600 մեծադիր (երկիչեան) երեսներից։

ԳԻՆԸ 3 Ռ. Է կամ 8 ՖՐԱՆԿ

Դիմել՝ Տփխիս «Կենդրոնական գրավաճառանոց». Ալէքսանդրապոլ՝ հեղինակին, որի հասցէն է՝ Александрополь, Гарекину Левонянцъ, կամ՝ Alexsandrapole (Russie) Garékin Léoniantz. 10—3

Дозволено цензурою, Тифлисъ 20-го Апрѣля, 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросіанца, и К°. На Михайловской ул., № 81.